

## «70 ՀԱՉԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ Կ'ԱՊՐԻՆ ՈՒ Կ'ԱՇԽԱՏԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ»

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար Աբդուլա Գիւլ Նոյեմբեր 1-ին յայտարարած է, որ «Հայ-թրքական սահմանը մեծ հաշուով բաց»:

«Ազատութիւն» ռատիոկայանին տուած հարցազրոյցի ընթացքին Գիւլն ըսած է, որ Թուրքիոյ մէջ ներկայումս կ'ապրի եւ կ'աշխատի 70 հազար հայաստանցի, որոնք իրենց վաստակած գումարները կ'ուղարկեն Հայաստան: «Բացի այդ, կը գործէ օդային հաղորդակցութիւնը», - աւելցուցած է ան:»

«Այս քաղաքական հարց է, որ մեծամասամբ կախուած է Հայաստանի կառավարութենէն», - կարծիք յայտնած է թուրք նախարարը: Աբդուլա Գիւլ:

Խօսելով Հայոց Ցեղասպանութեան հետ կապուած փաստերը ուսումնասիրելու նպատակով միաստեղ յանձնաժողով ստեղծելու վերաբերեալ վարչապետ Ռեջեփ Էրդողանի առաջարկի մասին՝ Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարը ըսած է, «Մեր վարչապետը դիմած է Հայաստանի նախագահին, սակայն, ցաւօք, դրական պատասխան չէ ստացած»: «Բայց յոյսով եմ, որ ձեր ղեկավարութիւնը կրկին կը մտածէ այդ մասին, եւ մենք հարցերը կը լուծենք բարի կամեցողութեամբ», - ըսած է Աբդուլա Գիւլ:

## ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐՈՒ ՅԱՂՈՒՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՐ ԿԸ ՎԱԿԵՐԱՑՈՒԻ

«Turkish Daily News» օրաթերթի համաձայն, ամերիկեան «Ճորճթաուն» համալսարանի դասախօս Քլայտ Ուիլքոքս Անգարայի մէջ թուրք լրագրողներուն յայտնած է որ, Նոյեմբեր 7-ին տեղի ունենալիք ընտրութիւններուն Դեմոկրատիկ կուսակցութեան յաղթանակի պարագային, Գոնկըէ-սը կը վաւերացնէ Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը:

Ամերիկացի փրոֆեսէօրը ըսած է որ, ղեմոկրատները մեծ հաւանականութիւն ունին դառնալու մեծամասնութիւն: Այդ պարագային Ներկայացուցիչներու Տան խօսնակը կ'ընտրուի Նենսի Փըլոսի եւ ան կ'աշխատի որպէսզի հայկական բանաձեւը վաւերացուի: Մինչդեռ, ներկայիս խօսնակ Տէնիս Հէյթըրթ կը մերժէր քուէարկութեան դնել բանաձեւը:

Փրոֆ. Ուիլքոքս շեշտած է սակայն, որ Ներկայացուցիչներու Տան կողմէ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւի վաւերացումը չի նշանակէր որ, ամերիկեան վարչակազմը փոխած է այդ հարցով իր տեսակէտը:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի 7-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՎՍԱՅ ԵՆ՝ ՕՐ ՄԸ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԻ

Եօթը տարի առաջ Հոկտեմբեր 27-ին, խումբ մը ոճրագործներ Նախրի Յունանեանի գլխաւորութեամբ, ներխուժելով Հայաստանի խորհրդարանի նիստերու դահլիճ, գնդակահարեցին 8 պետական գործիչներու՝ Ազգային ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանին եւ վարչապետ Վազգէն Սարգսեանին, խորհրդարանի փոխնախագահներ Եուրի Բախշեանին եւ Ռուբէն Միրոնեանին, պատգամաւորներ Միքայէլ Քոթանեանին, Հենրիկ Աբրահամեանին եւ Արմենակ Արմենակեանին եւ նախարար Լեոնարդ Պետրոսեանին:

Տարելիցի օրը, Ազգային ժողովի նախկին նախագահ Կարէն Դեմիրճեանի չիչատակին յարգանքի տուրք մատուցելու համար Կոմիտասի անուան պանթէոն այցելեցին «Արդարութիւն» դաշինքի գրեթէ բոլոր կուսակցութիւնները:

Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեան իր հօր շիրիմին ծաղիկ գետեղելէ ետք լրագրողներուն յայտնեց, որ Հոկտեմբերի 27-ին գնդակահարուեցաւ ժողովուրդի մէջ արթնցած յոյսը եւ եթէ այդ ողբերգութիւնը չըլլար, Հայաստանի մէջ ուրիշ իրավիճակ կ'ըլլար: «Դատարարութեան հետ կապուած մեր գնահատականը յայտնի է, յստակ: Դատարարութիւնը ոչ թէ փարատեց, այլ հակառակը՝ էլ աւելի խորացրեց հասարակութեան մէջ տիրող կասկածները», - ըսաւ Ստեփան Դեմիրճեան:



Ընդդիմադիր կուսակցութիւններու ղեկավարները ծաղիկներ կը գետեղեն Կարէն Դեմիրճեանի շիրիմին

Ըստ Դեմիրճեանի, ուշ թէ կանուխ ճշմարտութիւնը կը բաւարարուի:

Գայտուի: «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան նոյն համոզմունքը յայտնելով ըսաւ, «Բացառապէս անհրաժեշտութիւն է թէ ՀՀ դատական

Շարք էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ ԾԱԲԱԼՈՎ ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԻՐՔԻ ՎՐԱՅ Է

Հայաստանի առեւտուրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարէն ճշմարիտեան Հոկտեմբեր 31-ին լրագրողներուն յայտարարած է, որ Եւրամիութիւնը (ԵՄ) Հայաստանի մեծագոյն տնտեսական գործընկերն է: Նախարարը նաեւ յայտնած է, որ 2006 թուականի առաջին ութ ամիսներուն Հայաստանէն արտահանուածներու 50.8 տոկոսը բաժին ինկած է Եւրոպային Միութեան, իսկ Հայաստան ներարկուող ապրանքներու 30.6 տոկոսը կու գայ Եւրոպայէն:

Կարէն ճշմարիտեան յայտարարած է, որ Եւրոպայի Միութեան անդամ երկիրներէն ներդրումներու կտրուկ աճ արձանագրուած է 2003 թուականին: «Օտարերկրեայ 400 միլիոն ԱՄՆ տոլար ներդրումների մէջ ԵՄ մասնաբաժինը 2005 թուականին կազմել է 53.9 տոկոս՝ 215 միլիոն: Իսկ 244 միլիոն տոլար ուղղակի ներդրումների մէջ՝ 187 միլիոն կամ 76.5 տոկոս»:

Նախարարը յոյս ունի, որ 2006 թուականին կ'արձանագրուի ԵՄ ներդրումներու աճ մօտ 20 տոկոսով: ԵՄ անդամներէն Հայաստան ներդրումներու ծաւալով առաջին տեղը կը գրաւէ Գերմանիան՝ 97.354 միլիոն տոլարով: Յետոյ կու



Առեւտուրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարէն ճշմարիտեան

գայ Յունաստանը՝ 74.327 միլիոն, Ռուսաստանը, երրորդն է՝ 67.565 միլիոնով:

Յաջորդ տեղերը կը գրաւեն Լիբանանը՝ 62.473 միլիոն, ԱՄՆ-ը՝ 23.983 միլիոն, Ֆրանսան՝ 20.290 միլիոն:

2006-ի առաջին ութ ամիսներուն 17.225 միլիոն տոլարի ներդրում է կատարած է Արժանթինը, սակայն այս ժամանակամիջոցին առաջատար Լիբանանն է՝ 49.616 միլիոն տոլարով:

## 1992-ԷՆ Ի ՎԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԳԱՂՈՒԾ Է ՇՈՒՐՋ 1 ՄԻԼԻՈՆ ՀՈԳԻ

Հայաստանի Հանրապետութեան տարածքային կառավարման նախարարութեան գաղթականական գործակալութեան պետ Գագիկ Եգանեան Հոկտեմբեր 30-ին յայտնեց, որ 1992 թուականէն ի վեր երկրէն հեռացած է 900 հազարէն մինչեւ 1 միլիոն հայաստանցի:

Գործակալութեան պետը աւելցուց, սակայն, որ 2001 թուականէն սկսեալ արտագաղթի ցուցանիշը «գրեթէ զրոյի է հասել»: Այսուհանդերձ, տարեկան մօտ 8 հազար հայաստանցի կը շարունակեն դիմել Եւրոպական երկիրներու գաղթականական ծառայութիւններուն:

Գագիկ Եգանեան անհնար կը նկատէ արտագաղթի դէմ պայքարի միայն իր ղեկավարած գործակալութեան համեստ ուժերով:

«Ազատութիւն» ռատիոկայանի այն հարցին, թէ արդեօք կառավարութիւնը ծրագիրներ կը մշակէ աշակցելու արտասահման գտնուող եւ Հայաստան վերադառնալու ցանկութիւն ունեցողներուն, գաղթականական գործակալութեան

Շարք էջ 4

**ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ՎԱՅ ՎԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՆ ՈՒ ՌՈՒՍԱՍԱՆԻՆ ՊԵՏՔ Է ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴ**

Իրան-Հայաստանի գազամուղի վերաբերեալ առաջացած ամբողջ աղմուկը ունի երկու շատ կարեւոր բաղադրիչ, որոնք երկուսն էլ Հայաստանի համար ունեն կարեւոր ռազմավարական նշանակութիւն: Եւ թերեւս կարելի է ասել, որ դրանցից մէկը վրայ բեւեռուած ուշադրութիւնից դուրս է մնում երկրորդը, որը գուցէ թէ՛ աւելի կարեւոր է, քան առաջինը: Անկասկած, գազամուղը դնելով Ռուսաստանի տրամադրութեան տակ, ինչն արդէն կատարուած փաստ է, Հայաստանի իշխանութիւնը կատարում է ռազմավարական մեծ սխալ: Այդ մասին շատ է խօսուել, չնայած խօսացածը երբեք էլ շատ չի կարող համարուել, քանի որ խօսքը վերաբերում է պետութեան անվտանգութեանն ու զարգացման հեռանկարին: Սակայն այս ամբողջ պատմութեան մէջ, իմ կարծիքով, կայ պետութեան անվտանգութեանն ու զարգացմանը վերաբերող ու սպառնացող մէկ այլ հարց, որը կարծես թէ չի արժանանում բաւարար ուշադրութեան:

Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարեանը Հոկտեմբերի 30-ին Մոսկուայում Պոտինին հետ հանդիպմանը յայտարարել էր, թէ «Գազպրոմի հետ լուրջ պայմանաւորուածութիւնները մտել են իրագործման փուլ»: Հայաստանը փաստօրէն պետութեան նախագահի մակարդակով խոստովանում է, որ Գազպրոմի հետ ոչ թէ բանակցութիւն է ընթանում, ինչպէս հաւաստիացնում էին վարչապետն ու պաշտպանութեան նախարարը, ընդ որում ամիսներ շարունակ, այլ արդէն իսկ եղել են ուղղակի «լուրջ պայմանաւորուածութիւններ»: Հետեւաբար արդէն կասկածից վեր է, որ Հայաստանի իշխանութիւնը ամիսներ շարունակ խաբել է իր քաղաքացիներին: Իսկ երբ իշխանութիւնը խաբում է իր քաղաքացիներին, ապա դա շատ աւելի մեծ ու ընդգրկուն սպառնալիք է, քան ինչ որ բան ինչ որ մի երկրի տալ-չտալը: Ի վերջոյ, այդ տալ-չտալը ստի հետեւանք է, որով իշխանութիւնը յարաբերում է ժողովրդի հետ: Հետեւաբար իշխանութիւնը նախ պէտք է պատասխան տա ոչ թէ գազամուղը ունենե՞րին տրամադրելու, այլ ինՖորմացիան ժողովրդին չտրամադրելու համար:

Եւ եթէ երբեք հանրութիւնն իր առաջ խնդիր կը դնի ինչ որ կերպ վերականգնել ազգային այն ունեցուածքը, որ արդէն պատկանում է այլ մի երկրի, թէկուզ բարեկամ եւ ռազմավարական գործընկերոջը, ապա դրանից աւելի շուտ պէտք է կարողանալ լուծել իշխանութեան ազնուութեան խնդիրը: Հակառակ պարագայում դռնից հետ բերենք՝ պատուհանից են տալու, պատուհանից հետ բերենք՝ երդիկից: Ինչպէս ժողովուրդն է սիրում ասել՝ գողը որ տնից չլինի, կովը երդիկից չեն հանի: Հետաքրքրական է եւ այն, թէ ինչու է կառավարութիւնը թաքցնում ճշմարտութիւնը, եթէ վաղ թէ ուշ այն անխուսափելիօրէն դուրս է գալիս ջրի երես, առաւել եւս, եթէ բանակցութիւնը վարում է բարեկամ երկրի հետ, որի հանդէպ հայ հասարակութիւնը ունի որոշակի համակրանք, նոյնիսկ դեռեւս աւելի, քան Ֆրանսիայի հանդէպ: Ինչու է Հայաստանի իշխանութիւնն այդ բանակցութիւնները եւ դրանց շնորհիւ ձեռք բերած պայմանաւորուածու-

թիւնները պահում թաքուն, մինչեւ որ դրանք չեն իրականանում: Պատճառը թերեւս թաքնուած է նոյն ստի քաղաքականութեան մէջ: Պաշտօնական Երեւանը թերեւս խաբում է նաեւ Մոսկուային: Եթէ ուսանելի հետ բանակցութիւնը հենց սկզբից ընթանայ բաց տեքստով, ապա բնական է, որ այն կ'արժանանայ հանրութեան բացասական գնահատականին: Յամենայն դէպս եթէ հայ հանրութեան մէջ դեռեւս չեն գերակշռում «անյոյս երախտապարտները», որոնք պատրաստ են իրենց գիտակից կեանքի մնացած մասն անցկացնել այս կամ այն դեսպանատան դիմաց ծնկները կամ գետինը մաշելով, ապա երկրի ազգային անվտանգութեան հետ կապ ունեցող օբիեկտները նոյնիսկ ռազմավարական գործընկերոջը տալը պէտք է յարուցի այդ հանրութեան դժգոհութիւնը:

Դե իսկ եթէ գործընկերն իսկապէս ռազմավարական է եւ նրա կողմասեան քաղաքականութիւնը հիմնուած է ոչ թէ Հայաստանի հետ «լուրջ պայմանաւորուածութիւնների», այլ լուրջ հաշուարկների ու վերլուծութիւնների վրայ, ապա ուղղակի պարտաւոր է հաշուի առնել որեւէ երկրի հասարակական տրամադրութիւնն ու կարծիքը, յատկապէս այն հարցերի վերաբերեալ, որոնցում ինքը ներգրաւուած է ուղղակիօրէն: Ի վերջոյ որեւէ բան վերցնելու իմաստը պէտք է լինի այն, որ մեծամասնութիւնը համոզուած լինի, որ դա է առաւել դրական տուեալ օբիեկտի ճակատագրի համար: Հակառակ պարագայում ձեռք բերածը կարող է ծառայել որպէս մասնակ, ինչը կարող է քանդել, բայց ստեղծագործել՝ երբեք, գուցէ թէ՛ միայն ստեղծագործաբար քանդել: Իսկ քաղաքականութիւնը, որ հիմնուած է քանդելու սկզբունքի վրայ, յաջողութեան որեւէ շանս չունի: Հասկանում է արդեօք այդ ամէնը Ռուսաստանը: Դա թուում է այնքան պարզունակ, որ զարմանալի կը լինէր, եթէ ՀՀ հասկանար: Եւ այն, որ կրեմլը պարբերաբար ինՖորմացիաներ էր նետում գազամուղի ձեռք բերման մասին, այն պահին, երբ Հայաստանի իշխանութիւնը յամաբար էր հերքում էր դրանք, վկայում է, որ ուսանելն այնուամենայնիւ հասկանում են իրավիճակի նրբերանգները եւ ուղղակի հաղորդագրութիւններ էին յղում հայ հասարակութեանը:

Փաստօրէն այստեղ դրանք որեւէ արձագանք չգտան, կամ եղածը բաւարար չէր: Կամ էլ իշխանութեանը յաջողուեց ստի խնդրից հարցը տեղափոխել տալ-չտալու հարթութիւն, ուր եւ հանգիստ յայտարարում էր, թէ չենք տալու, ուր հարցը փակուում էր: Ռուսները նորից էին բարձրացնում, մերոնք նորից նոյն ձեւով փակուում էին:

Գուցէ Ռուսաստանին այդ ամէնը չի հետաքրքրում: Չի բացառուում որ դա այդպէս է: Բայց դա քաղաքականութիւն է, եւ եթէ դու այդ ամէնով չես հետաքրքրուում, այդ ամէնը կը հետաքրքրուի քեզնով: Իհարկէ, պէտք է բացառել նաեւ, որ հայ հասարակութեանն ու Ռուսաստանին ոչ թէ նոր միջնորդ է պէտք, այլ պէտք է նոր հայ հասարակութիւն եւ նոր Ռուսաստան:

**ՅԱԿՈՒ ԲԱՆԱԼԵԱՆ**  
«ԼՐԱԳԻՐ»

**ԲԻԶՆԵՍ ՊԼԱՆ՝ ՏԱՄՈՒՆԻ ԳԱԳՈՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Այն, որ Հայաստանում գործարարութեամբ կարող են զբաղուել միայն իշխանամերձ շրջանակներն ու պետական տարբեր կալիբրների պաշտօնեաները, գաղտնիք չէ ոչ մէկի համար: Միաժամանակ, գաղտնիք չէ, թէ ասենք, ո՞ր օբիեկտը, ո՞ր բիզնես ոլորտը կամ խանութը որ պաշտօնեայի սեփականութիւնն է:

Օրինաչափօրէն Հայաստանում իւրաքանչիւր սովորական քաղաքացի կարող է հերթով՝ սկսած բուտկայից վերջացրած ամենամեծ բիզնես ոլորտով, թուարկել, թէ դրանցից իւրաքանչիւրը ո՞ր օղակների բարեհաճութեան հաշուին է աշխատում եւ ո՞ւմ գրպանների պարունակութիւնն է աւելացնում: Իհարկէ, եթէ հարցնես այդ նոյն պաշտօնեաներին, անպայման կը լսես հիմնականում այն պատասխանը, որ իրենք կապ չունեն տուեալ հաստատութեան հետ, եւ որ պարզապէս դա իրենց գոբանջինն է կամ հօրեղբօր թոռան բաջմաղինը: Մանր ժուլիկութեան այս դրսեւորումները, իհարկէ, արւում են շահագիտական նպատակներով՝ վերջիններս իրենց «ունեցուածքը» գրանցում են բարեկամների անուններով՝ ընդամէնը խուսափելու համար նմանատիպ տհաճ հարցերից:

Վերջերս նմանատիպ մի դէպք տեղի ունեցաւ, երբ Աժ գործարար պատգամաւորներից խաչատուր Սուքիասեանը հրապարակաւ մեղադրեց ՀՀ կառավարութեանն առնթեր մաքսային ծառայութեան պետի տեղակալ Գագիկ խաչատրեանին՝ պաշտօնական դիրքի չարաշահմամբ սեփական բիզնեսը ծաղկեցնելու եւ այլոց խոչընդոտելու մէջ: Այս առումով, չուշացաւ սոյն անձնաւորութեան «չէֆի» Արմէն Աւետիսեանի՝ ենթակային բնազդով պաշտպանելու յայտարարութիւնը, համաձայն որի իր տեղակալը բիզնես չունի, պարզապէս նրա բարեկամներն են գործարարութեամբ զբաղում: Հասկանալի է, թէ ինչու է Արմէն Աւետիսեանը մեծ շտապողականութեամբ թեւերը փռած պաշտպանում իր «հարկատուին»: Բայց մենք փորձենք, այնուամենայնիւ, ներկայացնել, թէ էլ ինչ բիզնես ոլորտներում է ինքնադրսեւորում Գագիկ խաչատրեանը:

Այն, որ մաքսային բարձրաստիճան պաշտօնեային է պատկանում քաղաքի բարձրակարգ եւ ամենաթանկ սրճարաններից մէկը, եւ այն, որ վերջինս աշխարհահռչակ «Ֆիլա» ֆիրմայի սպորտային համազգեստների միակ ներկրողն է, յայտնի է շատերին: Բայց այս դեռ ամէնը չէ: Խաչատրեանին է պատկանում նաեւ «Գալաքսի» սուպերմարկետների ցանցը եւ իր մեքենաների առատութեամբ յայտնի «Գալաքսի» տաքսի սերվիսը: Եթէ կարծում էք, որ սրանով սահմանափակուում է սոյն բիզնեսմենի գործունէութիւնը՝ չարաչար սխալուում էք: Շարունակենք: «Կարմիր գլխարկ» կոնֆետի խանութների ցանցը եւս «աշխատացնում» է վերոնշեալ անձնաւորութիւնը:

Ի դէպ, փաստենք, որ Գագիկ խաչատրեանը համարում է հրուշակեղենի եւ օղու խոշոր ներկրողներից: Աւելին՝ այս պաշտօնեան հրուշակեղենի մոնոպոլիստներից է եւ անմիջապէս օպերատիւ գործողութիւններ է իրականացնում այն գործարարների նկատմամբ, ովքեր փորձում են մօտենալ այս ոլորտին: Այն, որ հայրենական շուկայում

ուսական օղիների տեսականու պակաս չենք գգում, եւս պարտական ենք խաչատրեանին: Մաքսագերծւում են այս սպորանքները, թէ՞ ոչ, մեծ հարց է, բայց այն, որ վերոնշեալ խանութներում ապրանքի գները շուկայականից անհամեմատ ցածր են, որոշակի եզրակացութիւնների հանգեյու առիթ տալիս է: «Սովրանո», «Ապելլոն», «Սալաս գուուպ», սրանք այն ֆիրմաների անուններն են, որոնք դարձեալ պատկանում են այս բազմաշնորհ չինովնիկին:

Պարզում է, սակայն, որ մաքսային պետի տեղակալի համար այս ամէնը քիչ է, եւ մարդը որոշել է իր հնարաւորութիւնները փորձել խիստ հաշիկական բիզնես ոլորտներում եւս: Խաչատրեանի տիրապետութեան տակ է գտնուում Երեւան-Եղվարդ երթուղային գիծը:

Ինչ խօսք, վերեւների փայլ ժամանակին տրուում է. դե, ինչպէս ասում են «պլատի նալոգի ի սպի սպոկոյնո»։ Իսկ ով աւելի լաւ է ուզում ծանօթանալ Գագիկ խաչատրեանի բարոյական եւ անտեսական գործունէութեանը, կարող է գնալ Եղվարդ եւ շարքային եղուարդոց հարցնել սոյն անձնաւորութեան մասին: Անմիջապէս, առաջին իսկ պատահած եղուարդցին անպայման մատնացոյց կ'անի «տամոժնի Գագոյի» հեկտարներով հողակտորները: Ինչպէս տեսնում ենք, մեր երկիրը նմանօրինակ «թաքնուած տաղանդների» պակաս առանձնապէս չի գգում: Դե հիմա, թող որ քան կ'ուզեն պայքարեն կոռուպցիայի դէմ: Բայց պայքարելուց առաջ, լաւ կը լինէր, այնուամենայնիւ, պարզել, թէ ո՞րն է այսօրինակ պաշտօնեայի եւ յանցագործի տարբերութիւնը: Տեսականօրէն՝ ոչ մի:

**ՎԱԶԳԷՆ ՍԵՐՈԲԵԱՆ**  
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԼՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՍԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԾԵԱՆ  
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
Յեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԱՐԱՍ ՍԱՐԳՍԵԱՆ. «ՄԵՆՔ ՄԻԱՆՇԱՆԱԿ ԿՈՂՋՈՒՆԵՆՔ ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՍՈՒՏՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսեանը «Ազատություն» ռադիոկայանին ասաց, որ իր ղեկավարած կուսակցությունը «միանշանակ կ'ողջունէր Լեւոն Տէր-Պետրոսեանի մուտքը քաղաքական դաշտ»:



«Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսեան

Նրա խօսքերով, «Հանրապետություն» կուսակցությունը «միշտ դրական վերաբերմունք է յայտնել առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի մասին»։ - «Բայց Լեւոն Տէր-Պետրոսեանը այն քաղաքական գործիչն է, որի մասին «եթէ»-ներով խօսելու իրաւունք ես անձամբ չունեմ: Երբ որ Լեւոն Տէր-Պետրոսեանը ինքը որոշում կը կայացնի մտնել քաղաքական դաշտ, մենք միանշանակ կ'ողջունենք այդ մուտքը ու դրանից յետոյ մեր տեսակէտը կ'սահենք»:

«Անձամբ ես կ'ուզեմայի, որ ինքը մտնէր քաղաքական դաշտ», - յաւելեց Արամ Սարգսեանը:

Սարգսեանը «խիստ հաւանական» է համարում նախընտրական դաշինքների ձեւաւորումը ՀՀԾ-ի, «Օրինաց երկիր», «Ժառանգություն» եւ Ազատական-առաջադիմական կուսակցությունների հետ: «Հանրապետություն» կուսակցության նախագահը հարկ համարեց նշել, որ թէեւ այս պահին վաղ է խօսել, թէ նշուած ուժերից որի հետ համագործակցությունը առաւել սերտ կը լինի, բայց միանշանակ է, որ «Հանրապետությունը» ընտրությունների գնալու է դաշինքով:

Արամ Սարգսեանի կարծիքով, իշխանութեան երկու թեկերը՝ «ի դէմս նախագահ Քոչարեանի եւ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի», շարունակում են պայքարել միմեանց դէմ՝ փորձելով ապացուցել, թէ «ով է այսօր աւելի ուժեղ եւ ազդեցիկ» եւ «ով պէտք է աւելի շատ ձայներ նկարի»:

Անդրադառնալով արտգործնախարար Վարդան Օսկանեանի նախագահական հաւակնություններին՝ ընդդիմադիր գործիչը ասաց. -

«Եթէ նախագահական նստավայրը Վարդան Օսկանեանին նման բան ասած չլինէր, Վարդան Օսկանեանի նման համեստ մարդը երբեք նման բաներ չէր խօսի եւ նման հաւակնություններ չէր ցուցաբերի»:

Նրա խօսքերով, շատ բարդ է ասել, թէ ինչ նպատակով է դա արւում, որովհետեւ «Ռոբերդ Քոչարեանը քաղաքական տակտիկան հրաշալի օգտագործում է՝ մասնաւորապէս Սերժ Սարգսեանի դէմ»:

Սարգսեանը ասաց, որ համոզուած է, որ Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի միջեւ կան հակասություններ. - «Այսօրուայ դրութեամբ սեփական ուժերը չափելու գործընթաց է գնում այդ երկու թեկերի մէջ»:

Այդուհանդերձ, ընդդիմադիր գործիչը չի բացառում, որ ինչ-որ փուլում, երբ «զգան, որ ամէն ինչ կորցնում են», Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը համաձայնութեան գան:

Հաշուի առնելով իշխանական այս թեկերի միջեւ սկսուած պայքարը եւ Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման շուրջ հնարաւոր զարգացումները՝ «Հանրապետություն» կուսակցության առաջնորդը «շատ հնարաւոր» է համարում արտահերթ նախագահական ընտրությունների անցկացումը:

ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՂԾՈՒԵԼՈՒ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ընտրական Օրէնսդրքի շուրջ ծաւալուած գործընթացից կարելի է կուսակցել՝ իշխանութիւնները ձգտում են արդար ընտրությունները, թէ՛ ոչ», - կարծում է ԱԺԿ վարչութեան նախագահ Շաւարշ Քոչարեանը եւ վստահեցնում, որ առաջիկայ ընտրությունները նոյնպէս կեղծուելու են:

Հոկտեմբեր 31-ին «Փաստարկ» ակումբում պարոն Քոչարեանն առանձնացրեց երեք հարց, որոնք հնարաւորութիւն են տալիս պատկերացնել, թէ այս պահին ԸՕ-ում փոփոխութիւններ իրականացնելով՝ ինչ նպատակ է հետապնդում:

Հայաստանում որքանով են ընտրությունները արդարութիւնը կապուած ԸՕ-ի հետ՝ պարոն Քոչարեանի առաջին հարցադրման պատասխանը տուել է նաեւ Վենետիկի յանձնաժողովը. «ԸՕ-ն անհրաժեշտ, սակայն ոչ բաւարար նախապայման է արդար եւ թափանցիկ ընտրությունների համար»: Երկրորդ կարեւոր խնդիրը մեծամաս-

նական-համամասնական ընտրակարգի յարաբերակցութիւնն է:

«Յետխորհրդային բոլոր այն երկրները, որոնք գնում են դէպի ժողովրդավարութիւն՝ ընտրել են համամասնական տարբերակը, իսկ բռնապետութեան ձգտողները՝ մեծամասնական: Դրա վառ օրինակն Ատրպէյճանն է, որն անցաւ 100 տոկոսանոց մեծամասնական համակարգի», - ասաց պարոն Քոչարեանը: Որպէս արդար եւ թափանցիկ ընտրություններ անցկացնելու նախապայման Շաւարշ Քոչարեանը կարեւորեց ընտրական յանձնաժողովների ձեւաւորումը: Նրա կարծիքով, ընտրական յանձնաժողովներում տեղերը պէտք է հաւասարապէս բաշխուած լինեն իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ, ինչպէս նաեւ հաւասարութիւն լինի յանձնաժողովների ղեկավար կազմում. «Եթէ յանձնաժողովի նախագահը իշխանութեան ներկայացուցիչ է, ապա նրա տեղակալը եւ քարտուղարը պէտք է լինեն ընդդիմութիւն եւ ճիշդ հակառակը»:

ԱԶԱՓՆԵԱԿԻ ԹԱՂԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՑԱԾ ԵՆ ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՄԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երեւանի Աջափնեակ համայնքում Հոկտեմբեր 29-ին անցկացուած թաղապետի ընտրություններն անցել են նորմալ, ընտրատեղամասերում բոլոր յանձնաժողովների անդամները ստորագրել են արձանագրությունները, նրանցից որեւէ մէկը յատուկ կարծիք չի գրել:

Համաձայն ընտրատեղամասերից ստացուած եւ արդէն իսկ ի մի բերուած արձանագրությունների, նախնական պատկերը հետեւեալն է. 13930 ձայն ստացել է անկուսակցական Ռուբէն Յովսէփեանը, 2416 ձայն՝ Դաշնակցության առաջադրած Գագիկ Սարգսեանը, իսկ «Ժողովրդավարական ուղի» կուսակցությունը ներկայացնող Իշխան Արշակեանի օգտին քուէարկել է 1920 ընտրող:

Ըստ Գագիկ Սարգսեանի, ընտրություններն անցան «անցած բոլոր ընտրությունների նման, եւ ժողովրդի մեծամասնութիւնը, սու-

եալ պարագայում՝ 70 տոկոսից աւելին, ընտրություններին չմասնակցեց»: Թաղապետի թեկնածուի գնահատմամբ, եթէ ընտրողներն աւելի ակտիվ լինէին, ապա ընտրությունների ելքն այլ կը լինէր:

Գագիկ Սարգսեանը նաեւ շեշտեց, որ իրեն պարտուած չի համարում. - «Որովհետեւ իմ դէմ էին հանուած հակայական լծակներ, միայն մի քանի հարիւր երթուղային տաքսիներ էին պտտուած: Դրանից առաջ կար վախի միջոցով՝ ես չհասկացայ, թէ որտեղից էր դաստեղծուել, ինչ պատճառով»:

Իշխան Արշակեանի նախընտրական շտաբում ընտրությունները նմանեցրին 2005 թուականի սահմանադրական հանրաքուէին:

Կենտրոնական ընտրական յանձնաժողովից «Ազատություն» ռադիոկայանին յայտնեցին, որ սահմանուած ժամկէտում թեկնածուներից ոչ մէկը ընտրութեան նախնական արդիւնքները չի բողոքարկել:

ՍԻՍ-ՈՒՄ ԿՐՔԵՐԸ ԴԵՌ ԹԵԺ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՍԻՄ հիմնադիր Հրանդ Խաչատրեանը կուսկազմբաժնի վարիչ Արթուր Սիրեկանեանից պահանջել էր մինչեւ Հոկտեմբերի 31-ը վերադարձնել կուսակցության կնիքը, ինչպէս նաեւ մի շարք փաստաթղթեր:

Հրանդ Խաչատրեանը պահանջել էր նաեւ իր աշխատասենեակում վերացնել «ընթացիկ վերանորոգման պատրուակով իրականացուած աւերածութիւնների հետքերը եւ ստեղծել բնականոն աշխատանքային պայմաններ մինչեւ սոյն թուականի Հոկտեմբերի 31-ը»:

Ուղիղ ժամը 15-ին Հրանդ Խաչատրեանը լրագրողների հետ բարձրացաւ աստիճաններով, սակայն գրասենեակի մուտքի մօտ հերթապահող երկու տղաները նրան ներս թողնելուց յետոյ դուռը փակեցին լրագրողների առջեւ՝ ասելով, որ ներս կը մտնէք ինչպէս որ եզրուած է իր քանի ըրողէ անց եւ ներկայացրեց, թէ ինչ է տեղի ունեցել. «Արթուր Սիրեկանեանը՝ կազմբաժնի վարիչը, տեղեկացրեց, որ ինձ գրաւոր պատասխան է ուղարկուել՝ դիմել ՍԻՄի ղեկավարութեանը»:

Հրանդ Խաչատրեանն ասաց,

ՎԱՐԱԳՆ ԶԱԽԱԼԵԱՆԸ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՈՒԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի քրէական եւ ռազմական գործերով վերաքննիչ դատարանի վճռով Հոկտեմբեր 30-ին ազատ արձակուեց «Միասնական Չաւախք» ժողովրդավարական դաշինքի նախագահութեան անդամ եւ Չաւախքի Երիտասարդական մարզամշակութային միութեան նախագահ Վահագն Չախալեանը: Նա կալանուել էր Հոկտեմբերի 11-ին՝ պետական սահմանը ապօրինի հատելու մեղադրանքով եւ պահուած էր Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութեան մեկուսարանում:

Չախալեանը իրեն սպասող բազմաթիւ հարազատներին, ընկերներին ու համախոհներին ասաց, թէ իրեն լաւ է գոտւած: Յաւելեց, որ ամենեւին չէր սպասում, որ ազատ կ'արձակուի մեկուսարանում 20 օր անցկացնելուց յետոյ, ու յայտարարեց, որ պատրաստուած է առաջի-

որ հանդիպել է նաեւ Հայկ Բաբուխանեանի հետ, եթէ, իհարկէ, դա կարելի է հանդիպում կոչել. «Նոյն գողական ժարգոնն է մնացել, նստենք, տեսնենք ինչ ես ուզում, սկանդալ մի սարքի»: Ի դէպ, Հայկ Բաբուխանեանը յանապարատի հրաւիրած ասուլիսում յայտարարեց, որ Հրանդ Խաչատրեանի հետ որեւէ խօսակցութիւն չի եղել:

Հայկ Բաբուխանեանն ասաց, որ ՍԻՄ նախագահութիւնը ընդունել է Հրանդ Խաչատրեանի հրաժարականը՝ հաշուի առնելով Սեպտեմբերի 20-ին վերջինիս հրաւիրած ասուլիսի ժամանակ հնչած յայտարարութիւնները:

Մինչդեռ Հրանդ Խաչատրեանը համարում է, որ ինքը շարունակում է մնալ կուսակցութեան դեմքի վրէժնակալը. «Իրաւական առումով ես եմ կուսակցութեան ղեկավարը, քանի դեռ իմ հրաժարականը չի ընդունուել, քանի դեռ չի կատարուել փաստաթղթերի յանձնում-ընդունում»: Հրանդ Խաչատրեանն աւելացրեց, որ ինքը պատրաստուած էր հեռանալ խաղաղութեամբ եւ, իր խոստման համաձայն, հեռանալ քաղաքականութիւնից, եթէ չլինէր «ստի եւ կեղծիքի աչապիսի տեղատարափ»:

կայ օրերին հանդէս գալ ասուլիսով:

Չախալեանը կալանուել էր Հոկտեմբերի 11-ին՝ Չաւախքից Հայաստանի տարածք ոչ համապատասխան փաստաթղթերով մուտք գործելու մեղադրանքով:

Չախալեանի փաստաբան Տիգրան Հայրապետեանը նշեց, թէ վահագն Չախալեանի ազատ արձակումը դեռ ամբողջական յաղթանակ չէ. - «Մեղադրանքը դեռ մնում է, եւ մենք պէտք է պայքարենք, որպէսզի մեղադրանքը նոյնպէս դուրս գայ»:

Իսկ հարցին, թէ երբ կարող է կայանալ Չախալեանի գործով դատական նիստը, փաստաբանը պատասխանեց. - «Դա կախուած է քննիչից: Ես կասկածում եմ, թէ գործը դատարան կը մտնի, որովհետեւ իրականում յանցագործութեան յատկանիշներ դժուար է տեսնել:

**ԼՈՒՐԵՐ**

**ՊՈՒՏԻՆԸ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ԱՃ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԵՋ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հոկտեմբեր 30, Կրեմլում կայացել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ռոբերտ Քոչարեանի հանդիպումը: Պուտինը ասել է, որ ակնկալում է Հայաստանի տնտեսութիւնում ուղղակի ներդրումների աճ:



Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտին

Վլադիմիր Պուտինը նաեւ տարօրինակ է համարել, որ Ռուսաստանն առաջին տեղում է ռազմավարական գործընկեր Հայաստանի տնտեսութիւնում ներդրումներով:

«Հայաստանում կապիտալ ներդրումներով Ռուսաստանն առաջին ամօթալի երրորդ տեղում է», - յայտարարել է Ռուսաստանի նախագահը: - «Ասում եմ՝ ամօթալի, որովհետեւ տարօրինակ է, որ Ռուսաստանը առաջին տեղը չի գրաւում ռազմավարական գործընկեր Մոսկովայի տնտեսութիւնում ներդրումներով»:

Միաժամանակ, Պուտինի խօսքերով, երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերը զարգանում են. - «Առեւտուրն աճում է, չնայած բացարձակ թվերը Ռուսաստանի համար գուցէ շատ բարձր չեն՝ 8 ամսում 60 տոկոս աճ»:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալութեան փոխանցմամբ, Ռոբերտ Քոչարեանը տեղեկացրել է, որ «Գազպրոմ»-ի հետ Երեւանի բոլոր համաձայնութիւններն իրականացում են:

«Գազպրոմ»-ի հետ բոլոր լուրջ պայմանագրերը հնարակնակ նախագծերի առնչութեամբ մտնում են իրականացման փուլը», - իր հերթին,

ասել է Ռոբերտ Քոչարեանը:

Նա յայտարարել է, որ կապիտալ ներդրումների հետ կապուած իրավիճակը, երբ Ռուսաստանը միայն երրորդ տեղն է գրաւում Հայաստանում ներդրումների գծով, պէտք է փոխուի. - «Յաջորդ տարուայ ընթացքում նման իրավիճակը հասնու կը փոխուի, եւ ուղղակի չեմ կասկածում դրանում»:

Ռոբերտ Քոչարեանը ռուս գործընկերոջն առաջարկել է մեխանիզմներ մշակել Ռուսաստանում Հայաստանի տարուայ անցկացման ժամանակ երկու երկրների միջեւ հաստատուած շփումներն օգտագործելու համար. - «Շատ կը ցանկանայինք, որպէսզի շփումների այդ համակարգը, որը մենք մշակել ենք, հետագայում էլ աշխատի»:

**ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի 7-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ**

Շարունակուած էջ 1-էն

համակարգի կայացման համար, թէ ՀՀ բնակչութեան հոգեւոր հանգստութեան, ինչու էլ, նաեւ զոհուածների հոգու հանգստութեան համար»:

Սարգսեան ըսաւ թէ ինք իշխանութիւններուն երբեք չէ մեղադրած յանցագործութիւնը կատարելու համար, սակայն ան ըսաւ, - «Ես այս իշխանութիւններին մեղադրել եմ երկու բանի համար: Որ իշխանութիւն լինելով՝ ունէին Ազգային Անվտանգութիւն, ներքին գործեր, ոստիկանութիւն, ոչինչ չարեցին, որ Հոկտեմբերի 27 չլինէր, որովհետեւ 27-ը տեղի է ունեցել Աժ-ի շէնքում: Երկրորդ՝ ամենատրտուրը, ամէն ինչ արեցին, որ Հոկտեմբերի 27-ը չբացայայտուի»:

Ընդդիմադիր գործիչները Պանթէոնէն ետք այցելեցին Եւաբլուր՝ վարչապետ Վազգէն Սարգսեանի շիրիմին:

Արամ Սարգսեան խօսք առնելով յայտնեց, որ իւրաքանչիւր չբացայայտուած դատավարութիւն երկրի անկայունութեան մասին է որ կը խօսի: «Սակայն, ես չեմ կարող 27-ի դատավարութիւնը համեմատել միւս դատավարութիւնների հետ, ուղղակի հասարակութեան վստահութիւնը պետութեան,

դատական համակարգի, այս իշխանութիւնների նկատմամբ այդ ոճրագործութիւնից յետոյ լիովին կորաւ», - ըսաւ Արամ Սարգսեանը:

Ազգային ժողովի պատգամաւոր Վիկտոր Դալլաքեան իր կարգին յիշեցուց, որ այսօր Հոկտեմբերի 27-ի պատասխանատուութիւնը կը կրեն ոչ թէ դրդիչներն ու կազմակերպիչները, այլ ընդամենը այդ յանցագործութեան գործիքները, կատարողները: «Համոզուած եմ, որ ժամանակի ընթացքում դա կը բացայայտուի, քանի որ դա պետականութեան ինդիք է, այլ ոչ անձերի. իրենց պարտականութիւնները կատարելիս գոհուել են պետական գործիչներ, որոնք ստացել էին ժողովրդի քուէն: Կրակել են ժողովրդի ընտրութեան վրայ, ժողովրդի վրայ», - ըսաւ պատգամաւորը: Ան շեշտեց, որ յանցագործութիւնը կը բացայայտուի միայն այն ժամանակ, երբ ունենանք ժողովրդի կողմէ ընտրուած օրինական իշխանութիւն:

Եւաբլուր այցելեցին նաեւ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեան, ՀՀԿ խմբակցութեան նախագահ Գալուստ Սահակեան եւ ուրիշներ: Ռոբերտ Քոչարեան այս տարի դարձեալ անձամբ չայցելեց Եւաբլուր, բայց ուղարկած էր ծաղկեպսակ:

**ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԳԱՂԹԱԾ Է ՇՈՒՐՁ 1 ՄԻԼԻՈՆ ՀՈԳԻ**

Շարունակուած էջ 1-էն

պետը պատասխանեց, թէ, իր կարծիքով, գերադասելի է կարելիութեան պարագային օգնել Հայաստան մնացողներուն: «Եթէ դու ունես միջոց՝ տալ ինքնաթիռի

տոմսակներ գնել ու մարդկանց վերադարձնել, թէ՞ դրա փոխարէն, առենք, տանեալ կենսաթոշակաւորների թոշակները բարձրացնել... Ես, որպէս քաղաքացի, երկրորդ ուղղութեան կողմնակից եմ»:

**Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆԻ**

Հոկտեմբեր 31-ին յայտարարութիւն է տարածուել ի պաշտպանութիւն «Ժամանակ Երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի:

Նախընտրական տարում Զանգուածային լրատուութեան միջոցների դէմ ճնշումների ուժգնացումը որոշակի մտահոգութիւնների տեղիք է տալիս: «Ժամանակ Երեւան» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի դատավճիռը եւս մենք դիտարկում ենք այդ ճնշումների շրջանակներում: Լրագրողի, թերթի խմբագրի նկատմամբ արձակուել է իր խտուրթեամբ աննախադէպ դատավճիռ, որը համարժէք է կատարուած արարքին եւ այդ արարքի հետեւանքներին: Մինչդեռ գործում առկայ մեղմացուցիչ հանգամանքների պարագայում պատիժը կարող էր լինել շատ աւելի մեղմ՝ ընդհուպ ազատագրկման հետ չկապուած:

Դրանից զատ, «ԺԵ» խմբագրի նկատմամբ ակնյայտօրէն ցուցաբերուել է խտրական մօտեցում՝ չի կիրառուել 2003 թուականին Ազգային ժողովի ընդունած «Սահմանուած կարգի խախտմամբ պարտադիր զինուորական ծառայութիւն չանցած քաղաքացիների մասին» օրէնքը, որը թոյլատրում է 27 տարին լրացած, զինծառայութիւն չանցած քաղաքացուն՝ որոշակի վճարի դիմաց զինզբօթյկ ստանալ եւ ազատուել քրէական պատասխանատուութիւնից:

Այս ամէնը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Ա. Բաբաջանեանի դատավճիռի հիմքում ոչ այնքան քրէական արարքն է, որքան նրա մասնագիտական աշխատանքը եւ քաղաքական հայեացքները: Արման Բաբաջանեանը դիմել է 27 տարին լրացած, 1992 թուականի աշնանային գորակոչից մինչեւ 2005 թուականը պարտադիր զինուորական ծառայութիւն չանցած քաղաքացիների ինդիքներով զբաղուող համապատասխան յանձնաժողովին՝ իր նկատմամբ վերոյիշեալ օրէնքը կիրառելու խնդրանքով:

Մենք՝ ներքստորագրողներս, միանում ենք այդ դիմումին եւ առաջարկում վերանայել առաջին աստիճանի դատարանի վճիռն ու Արման Բաբաջանեանի նկատմամբ կիրառել յիշեալ օրէնքը: Հակառակ պարագայում, չորս տարուայ ազատագրկման պատիժն ուժի մէջ թողնելն իբրեւ անկախ լրատուամիջոցների նկատմամբ ընտրութիւնների նախաշեմին կիրառուող ճնշումների ու պատժամիջոցների եւս մի փաստ կ'ընկալուի:

Նիկոլ Փաշինեան («Հայկական Ժամանակ»), Գեղամ Նազարեան («Հայֆ»), Շողեր Մարտիրոսեան («Զորքող Իշխանութիւն»), Յովհաննէս Գալաջեան («Իրաւունք»), Վարդան Յարութիւնեան (Իրաւապաշտպան), Բորիս Նաւասարդեան, Մեսրոպ Յարութիւնեան, Աշոտ Մելիքեան, Էդիկ Բաղդասարեան («Հետախուզող Լրագրողներ» ՀԿ), Կարէն Յակոբեան («Յոյս» ՀԿ), Սեդա Մելիքեան («Հոգեւոր Հայաստան» ՀԿ), Յարութիւն Սիմոնեան, Գոհար Արմենակեան (Զինուորի Պաշտպանութեան Մայրերի Նախաձեռնող Խումբ), Արսէն Խառատեան (Յանուն Գիտութեան Զարգացման Նախաձեռնող Խումբ), Լալա Ասլիկեան («Յոյս» ՀԿ), Միքայէլ Դանիէլեան (Հելսինկեան Ընկերակցութիւն), Զատա Փոստանցեան (փաստաբան), Աշոտ Աթոյեան (փաստաբան):

**ԱՆՅԱԶՈՂ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԿԸ ՎԵՐԱՆԱՅԻ ԻՐ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:  
Ռուսաստանում հաւատարմագրուած արտասահմանեան ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ հանդիպմանը Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Հոկտեմբերի 30-ին պարզաբանումներ է տուել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման իրենց դիրքորոշման վերաբերեալ: Ինչպէս հաղորդում է day.az-ը, Ալիեւն ասել է, որ աւելի քան տասը տարի ձգուող բանակցութիւնն արդիւնք չի տուել Հայաստանի դիրքորոշման պատճառով, որը չի ցանկանում յարգել միջազգային իրաւունքն ու կանոնը:

Իրաւունք է տալիս մտածել Ղարաբաղն Ատրպէյճանից կտրելու եւ Հայաստանին միացնելու մասին: Այդ բանը տեղի չի ունենայ: Դրա համար էլ Հայաստանի ղեկավարութիւնը պէտք է հասկանայ, որ Ատրպէյճանը երբեք չի գնա զիջումների տարածքային ամբողջութեան հաշուով», յայտարարել է Իլհամ Ալիեւը:

Սակայն Ալիեւը նշել է, որ Պրահայի գործընթացը կարող է ստեղծել հակամարտութեան խաղաղ կարգաւորման հնարաւորութիւն: Ատրպէյճանի նախագահը յայտարարել է, որ Ատրպէյճանի տարածքային ամբողջութիւնը բանակցութեան թեմա չէ եւ Հայաստանը պէտք է կատարի ՄԱԿ Անվտանգութեան Խորհրդի չորս բանաձեւերը, որով պահանջուած է հայկական զինուոր անյապաղ դուրս բերել Ատրպէյճանի տարածքներից:

Նա նաեւ յայտարարել է, որ Ատրպէյճանի դիրքորոշումն այն է, որ Լեւոնային Ղարաբաղի հայերին ու ատրպէյճանցիներին, որոնք կը վերադառնան այնտեղ, տրուի աշխարհում ամենաբարձր ինքնավարութեան կարգավիճակ: «Աշխարհում գոյութիւն ունի ինքնավարութիւնների դրական պրակտիկա: Յատկապէս Եւրոպայում շատ են ազգային փոքրամասնութիւններն ու ինքնավարութիւնները: Լինել փոքրամասնութիւն, չի նշանակում, որ այն իրաւունք ունի հեռացնել պետութեան մասն ու ստեղծել նորը: Դա մեր կառուցողական դիրքորոշումն է, այն առաւելագոյնը, որ մենք կարող ենք առաջարկել: Դժուար է ասել, թէ ինչ կը լինի անյաշոյղ բանակցութեան հետեւանքը: Ցանկացած դէպքում, եթէ բանակցութեան ներկայ փուլը արդիւնք չտայ, ապա Ատրպէյճանը անպայման կը վերանայի իր ռազմավարութիւնը, մարտավարութիւնը եւ պահուածքը», ասել է Իլհամ Ալիեւը:

«Հայաստանի դիրքորոշումը հիմնուած է ցանկութիւնների ու սպասումների վրայ, հիմնուած է կատարուած փաստի վրայ: Նրանք համարում են, որ ռազմական օպերացիաներում ժամանակակիցոր յաջողութիւնը, որին նրանք հասել են արտերկրի աջակցութեամբ, իրենց

ԱԶԳԱՅԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՉՅԻՇԵԼԸ ՁԵՌՆՏՈՒ Է ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան 7-րդ տարելիցն է: Արդեօ՞ք փարատուած են հարցերն ու ցրուած կասկածները, որոնցով շրջապատուած է մեր անկախութեան շրջանի ամենաաղմկոտ, կարելի է ասել դարի յանցագործութիւնը:

Եթէ շատերի համար ամէն ինչ դեռ մշուշում է, ապա Աժ փոխխօսնակ Երուի Բախշեանի այրուն՝ Անահիտ Բախշեանին, որոշ հարցերի պատասխան տուել է ժամանակը:

«ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ ԿԱՆ ԵՒ ՆՐԱՆՑԻՑ ՈՍԱՆՔ ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՆ»

«Չոհուածների հարազատներից ես միակն եմ, որ մեծ մասամբ մասնակցել եմ դատական նիստերին: Կազմակերպիչները, մասնակիցների ու հրահրողների մասին իմ պատկերացումները շատ այլ էին սկզբում, այլ էին նախաքննութեան ու դատաքննութեան ընթացքում, այլ են այսօր: Ես հիմա ոչ ասեկոսներէրից, ոչ էլ քաղաքական շահարկումներից, այլ միայն դատավարութեան ընթացքից ելնելով՝ համոզուած ասում եմ, որ եղել են կազմակերպիչներ, որ այդ կազմակերպիչները պատահական մարդիկ չեն, որ նրանցից ոմանք այսօր իշխանութեան մէջ են, ոմանք վերացուեցին, ոմանք էլ փախըցեցին: Ինչո՞ւ եմ համոզուած, որ կազմակերպիչներից ոմանք իշխանութեան մէջ են, դա երեւում է իրենց պահուածքից, գոհուածների չիշատակի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքից:

Այսօրուայ իշխանութիւնը ամէն կերպ փորձում է մոռացութեան տալ պատմութեան այդ սեւ էջը, չհնչեցնել գոհուածների անուները, դրանով մատնում է յանցագործութեանը յանցակից լինելը, որովհետեւ իմ կարծիքով, պարտադիր չէ, որ իրենք մասնակից լինէին քարտեզը գծելուն, կամ նախապէս որոշումներ ընդունելուն, կամ թէ ով ում է սպաննելու, բոլորովին պարտադիր չէ, բայց որ այս նախագահի ու անվտանգութեան խորհրդի քարտուղարի օրօք ծրագրուեց ու իրականացուեց ողբերգութիւնը, արդէն խօսում է իրենց մեծ մեղքի մասին:

Չբացայայտուած կազմակերպիչները ոչ միայն պատասխանատուութիւն չկրեցին, այլեւ թելադրեցին դատավարութեան ողջ ընթացքը: Յետոյ էլ սկսեցին խօսել այն մասին, թէ մեր պետութեան մէջ առաջընթաց սկսել է արձանագրուել 1999 թուականից յետոյ: Վազգէն Սարգսեանի հետ իշխանութեան

եկած «Հանրապետականը» նոյնպէս դատավարութեանը տէր չկանգնեց: Սա ասում է այն մասին, որ բոլորին ձեռնտու է գոհուածների անունները չհնչեցնելը, որ թմբիր բերեն ժողովրդի յիշողութեան վրայ:

Միայն լրագրողներն են, այն էլ ոչ իշխանական լրատուամիջոցների, որ երբեմն-երբեմն յիշեցնում են եղելութեան մասին»:

Անահիտ Բախշեանն ուղղակի զարմացած է, թէ ինչպէս կարելի էր պետութեան անկախութեան 15-ամեակ տօնել եւ ոչ մի տեղ չհնչել հոկտեմբերի 27-ին գոհուածների անունները, ովքեր աւանդ ունէին պետականութեան կայացման գործում:

«Երբ տօնում էինք պետականութեան 15-ամեակը, անձամբ ես շատ մեծ ողբերգութիւն եմ ապրել, իսկապէս ուրախացել եմ, շնորհաւորել եմ Երուային, ինքս ինձ, բայց ամենաբարձր ատենաներից եւ տարբեր մասշտաբների միջոցառումներում մեր 15-ամեայ պատմութեան յիշողութիւնները ներկայացուեցին՝ յիշատակելով միայն վերջին 5-6 տարիները: Մարդ եթէ մեղք չի գործել՝ հեշտութեամբ ասում է, որ ես չեմ գործել, բայց եթէ մեղակից է, ուզում է դրա մասին չխօսել:

Եթէ նախագահը, վարչապետը իրենց ամպագողգող ելոյթներում ասէին, որ այս 15 տարուայ պատմութեան մէջ ունեցել ենք նաեւ այդպիսի ողբերգութիւն, ազնիւ խօսք, ինձ մօտ ինչ-որ բան կը մեղմանար, բայց ինչքան իրենք այսպէս են անում, այնքան կասկածները խորանում են»:

«ՔՈՉԱՐԵԱՆԻ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԻՐԵՆ ԽԱՆԳԱՐՈՂ ԲԱՆ ԿԱՅ»

Տիկին Բախշեանը, յիշելով, որ Ռոբերդ Քոչարեանը գրեթէ Եւաբլուր չի գնում, նկատում է. «Որպէս պետութեան ղեկավար՝ նա բարդոյթներով մարդու վարքագիծ ունի: Ինքնապաշտպանուելու ինդիք ունի կարծես, իրեն փաթաթել է անտեսանելի փշալարերով, որոնք թոյլ չեն տալիս իրեն մօտենալու հասարակութեանը, ոչ էլ հասարակութեանն է թոյլ տալիս մօտենալ իրեն:

Երբ 1999թ. Նոյեմբերի 26-ին նախագահը տիկին Բելլայի հետ եկան մեր տուն ցաւակցելու, դա շատ անկեղծ թուաց:

Սակայն երբ 2000թ. Մայիսի սկզբներին, դէպքից ընդամենը 7 ամիս անց մեր յամառ պնդումներից

յետոյ իր նստավայրում ընդունեց գոհուածների կանանց եւ տիկին Գրետային, վերաբերմունքն արդէն բոլորովին այլ էր: Իսկ մենք ոչ մի վայրկեան չենք մոռանում, որ նախագահը գոհուած խօսնակի կաբինետում երես առ երես 1.5 ժամ խօսել է ահաբեկիչի հետ, ինչը ահաբեկչութեան պատմութեան մէջ նախադէպ չունի:

Պետութեան ղեկավարը եթէ նոյնիսկ չի գնահատում գոհուածներին, միայն քաղաքավարութիւնից ելնելով, գոհուածների չիշատակի նկատմամբ պիտի դրսեւորի համապատասխան վերաբերմունք, որը շատ կարեւոր կը լինի իր անուան հետ կապուած կասկածները ցրելու համար: Նա ինչ-որ բան ունի իր սրտում, եւ ինքը չի կարողանում իր յիշողութիւնից թօթափել այն, ինչը դրսեւորում է իր վարքագիծով ու իր կողքը չկայ մէկը, որ յուշի այդ մասին»:

Տիկին Բախշեանը նկատում է, որ ոճրագործութեան 7-րդ տարին է լրանում, պետականօրէն նշուել է միայն առաջին տարին, «այն էլ մի անկապ համերգով, ճ հատ ծաղկեփնջով, էլի առանց անուն հնչեցնելու, ու դրանից յետոյ պետական մասշտաբով ոչ մի անգամ չի նշուել գոհուածների մահուան տարելիցը:

Ճիշդ է, առաջին տարին շիւրմներին նախագահի անունից ծաղկեփնջեր կային, յետոյ դրանք էլ վերացան, վարչապետի կողմից ծաղկեփնջեր լինում են, ՀՀԿ-ում էլ Եւաբլուրի ծննդեան օրը նշում են, բայց սա ինձ չի միջախոսում: Յետոյ հեռակայ կարգով գալիս իմ ականջին է հասնում, որ այսօր Եւաբլուրի կենացը խմբեցին. դա ոչինչ չարժէ. Եւաբլուրն նրանց կուսակից եւ իրապէս գաղափարական ընկերն էր, ոչ սեղանակիցը: Անցած 7 տարուայ մէջ ոչ մի անգամ ոչ մի պաշտօնեայ, էլ չեմ ասում վարչապետը կամ նախագահը, հրապարակաջօրէն չեն յիշել իրենց գոհուած ընկերներին»:

ԱՍՆ-ը ՇԱՅԱԳՐԳՈՒՄԾ Է, ՈՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՉԲԱՑԱՅԱՅՏՈՒԻ

Հոկտեմբերի 27-ի հետ այս կամ այն առնչութիւն ունեցող մարդիկ առեղծուածային կերպով, տարբեր ձեւերով հեռացան կեանքից, եւ այսօր բաւականին նեղացել է այն



Երուի Բախշեանի այրին՝ Անահիտ Բախշեան

մարդկանց շրջանակը, ովքեր գուցէ եւ ինչ-որ բան իմանալին ու պարզէին յանցագործութեան կազմակերպման մասին:

Մեծ թուով մարդիկ այսօր ԱՄՆ-ում են, օրինակ յանցագործութեան օրը Նաիրի Յունանեանի հետ անընդհատ անմիջական կապի մէջ գտնուող Հանրային հեռուստատեսութեան լրագրող Տիգրան Նազարեանը, Նաիրի Բաղալեանը, որին Դեմիքոնեանների փաստաբանը միջնորդում էր հարցաքննել եւ անգամ մեղադրանք ներկայացնել, Վազգէն Սարգսեանի թիկնազօրի ղեկավարը, Աժ-ի բժիշկն ու բուժքույրը, Ալեքսան Յարութիւնեանի քարտուղարուհին, Աժ-ի հասարակայնութեան հետ կապերի վարչութեան պետը, անցագրային բաժնի աշխատակիցներ: «Ինչքան էլ ասեն, որ դատավարութիւնը չբացայայտեց ամբողջութեամբ իրականութիւնը, ճիշդ չէ, որովհետեւ դատավարութեան ընթացքում հնչեցին փաստեր, առանձին անուններ, որոնք պէտք է դատակոչուէին որպէս վկայ, բայց յանկարծ մի քանի օրում յայտնուեցին ԱՄՆ-ում:

Կարծես ԱՄՆ-ն շահագրգռուած կողմ լինէր, որ այդ բոլոր մարդկանց տանէր, որպէսզի գործը չբացայայտուէր: Ես դա սպացուցել չեմ կարող, բայց գգում եմ», - խոստովանում է Անահիտ Բախշեանը, որի համար նաեւ ականջատ է, որ Տիգրան Նազարեանի սպանութիւնն էլ տեղաւորում է հետքերը թաքցնելու ինդիքի լուծման շրջանակում. «Արմէն Սարգսեանին բոլորովին ձեռնտու չէր նրա սպանութիւնը:

Կարող է Արմէնը չարացած էր, բոլորս էինք Նազարեանի վարքագծի որոշ պահերի վրայ չարացած, եւ

Advertisement for ABA Insurance Services. It features the ABA logo, a 30th Anniversary badge (1975-2005), and a cartoon illustration of a man in a suit running. The text includes 'ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՐԱԺԵՇՏ Է', 'ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ', and contact information: 818 500-9585, ABA INSURANCE SERVICES, 805 E. Broadway, Glendale, CA 91205, ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD".

ՍՓԻՈՔԱՆՅ ՄԱՍՈՒԼ

ՏԱԿԱԻՆ ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՄՊԱՍԵՆՔ

Օսմանյան կայսրության «եռեակ»-ին գործած ոճիչն՝ Հայոց Յեղասպանությունն 91 տարիներ անցան, իսկ Հանրապետական թուրքիոյ կառավարության կազմակերպած 6-7 Սեպտեմբերի դէպքերէն ալ՝ 51 տարիներ:

50 երկար տարիներ 6-7 Սեպտեմբերի դէպքերուն մասին հրապարակաւ չխօսուեցաւ, չգրուեցաւ: Թուրքիոյ մէջ ժողովրդավարական կարգերու հաստատման անհրաժեշտութեան հաւատացող գրողներ, պատմաբաններ, լրագրողներ, 50 տարի յետոյ, չիսնամեակը առիթ նկատած, արխիւներու մէջ պահուած իրողութիւնները լոյս աշխարհ հանեցին: «Եթէ մեր անցեալի մոլթ կողմերը, ամօթալի դէպքերը հրապարակաւ չխօսուին, եթէ անոնք բոլորէն չիմացուին այս երկրին մէջ ժողովրդավարութիւն հաստատել կարելի չէ» ըսին:

Ու չիշուեցաւ անցեալի դէպքերը:

Անգլիոյ եւ Յունաստանի հետ կիպրոսի հարցով բանակցութիւններ վարող թուրք կառավարութեան տուած անհիմն լրատուութեան մը հետեւանք թէ՛ յոյներ Աթաթիւրքի Սելանիկի տան առջեւ ուսմբ պայթեցուցած են, նախապէս կացիններով, բահերով, փայտերով գինուած խուժաններ, հայերու եւ յոյներու խանութներու եւ տուններու հասցէներուն տեղեակ առաջնորդներով, յատկապէս Պոլսոյ եւ Իզմիրի մէջ յարձակման անցան: Մինչեւ կէս գիշեր՝ պարէտային վիճակի յայտարարման պահը, խուժանը Պոլսոյ զանազան վայրերը հրկիզեց: Ըստ պետական տուեալներու, ներառեալ յունական

70 եկեղեցիները եւ յունաց Պատրիարքութեան ամառանոցը, 5538 շէնք հրոյ ճարակ եղած էր: Այս շէնքերէն 3584-ը յունապատկան էր. մնացեալը, մեծամասնութեամբ, կը պատկանէր հայերուն: Հրեաներն ալ չնչին կորուստ մը ունեցած էին: Յոյն կղերական մը մեռցուած էր: Տեղ մը, պարկի մը մէջ, անխացած երեք դիակներ գտնուած էին: Յունաստանի Իզմիրի հիւպատոսարանը, Իզմիրի Տոնավաճառի Յունաստանի տաղաւարը եւ յունական եկեղեցին ալ հրկիզուած էր: Պոլսոյ յունական ու հայկական հիւանդանոցներն իսկ յարձակումէ գերծ չէին մնացած: Հայ եւ յոյն գերեզմանատուներու նորաթաղ մեռելները փողոց նետուած էին: Յունական 32, հայկական 8 դպրոց վնասուած էր: Նիւթական կորուստը արժէքաւորել չափազանց դժուար էր:

Անոնք, որոնք այդ օրերը ապրած էին, անոնց ցաւերը թարմացան: Անոնք, որոնք Հանրապետական թուրքիոյ այսքան մօտ անցեալի սեւ էջերուն մասին տեղեկութիւն չունէին, մանրամասնութիւններուն իրագեկ դարձան:

Երբ ճշմարտութիւնը ցոլացնող գրականութեամբ թերթերը եւ գրավաճառատուները լեցուեցան, ոմանք դէպի ժողովրդավարութիւն առնուած այս քայլէն հրճուեցան, ոմանք ալ ցոյցեր կատարեցին, «Դէպքերը դարձեալ կրնան կրկնուիլ» գոռացին:

Թէեւ իսօքի ազատութիւնը ժողովրդավարական սկզբունքներուն մաս կը կազէ, սակայն արար-աշխարհի առջեւ փոքրամասնութիւններուն սպառնացող այս անձերուն դէմ ոչ ոք դատախազու-

թեան դիմեց: Երբ թուրք գրագէտ մը, եւրոպական թերթի մը, «Թուրքերը մէկ միլիոն հայ ջարդեցին ու 30 հազար ալ քիւրտ սպաննեցին» ըսաւ, «Թուրքերու ինքնութիւնը վիրաւորելու» յանցանքով իր դէմ դատ բացուեցաւ: Եւրոպայի ճշման տակ այդ դատը, իրաւաբանական կարգ մը պատճառաբանութիւններով, դադրեցուցաւ: Երբ հայ լրագրող մը նմանօրինակ արտայայտութիւն ունեցաւ, 6 ամսուայ պաշտօնական ազատագրկման դատապարտուեցաւ: Թուրքիոյ մէջ արդարութիւնը դատարանին մէջ իսկ գոյութիւն չունի:

Թէեւ 6-7 Սեպտեմբերէն յետոյ, օրուայ կառավարութիւնը, Եւրոպայի ձայնը կտրելու համար, դէպքերէն տուժողներուն չնչին հատուցում մը տուաւ, սակայն երբեք հրապարակաւ ներողութիւն չիւնդրեց: Ո՛չ յաջորդական կառավարութիւններ եւ ոչ ալ չիսնամեակին գործի գլուխ գտնուող եւ ԵՄ-ի անդամակցելու համար իբրեւ թէ ժողովրդավարական կարգեր հաստատելու միտում ունեցող այժմու կառավարութիւնը ներողութիւն ինդրեց:

Այնքան ատեն որ թուրքիոյ կառավարութիւնները այսքան մօտ անցեալին պատահած, թուրք եւ օտար թղթակիցներու նկարած եւ տեղեկագրած, դէպքերու գլխաւոր դերակատարները թուրքական ատենանի առջեւ դատուած, ականատեսները տակաւին կենդանի, այս

զարհուրելի ոճիրին համար ներողութիւն չեն խնդրեր եւ բարձրագոյն բերաններ. «Մենք յանդգնութիւնը ունինք եւ տակաւին կը յանդգնինք ըսելու՝ որ մեր պատմութեան մէջ չունինք էջ մը՝ որ արատաւոր եւ խաւար եղած ըլլալ» յանգերգը յաճախ կը կրկնեն, թուրքիոյ մէջ ժողովրդավարական կարգերը չեն կրնար հաստատուիլ: Խոստովանանքը անխուսափելի անհրաժեշտութիւն մըն է, որ սակայն թուրքին բառապաշարին մէջ գոյութիւն չունի:

Այժմ, երբ թուրքիա կը փորձէ Եւրոմիութեան անդամակցիլ, մեր Հայ Դատի հարձերով զբաղող մարմինները, զանազան երկիրներու մէջ իարսխած հայկական հզօր լապիական կազմակերպութիւնները պէտք է ամէն ջանք ի գործ դնեն, որպէսզի թուրքիոյ կառավարութիւնը 6-7 Սեպտեմբերի դէպքերուն համար պաշտօնապէս ներողութիւն խնդրէ թէ՛ անարգուած եւ նիւթական մեծ կորուստի ենթարկուած թուրքիոյ փոքրամասնութիւններէն եւ թէ՛ մարդկութեան դէմ գործուած այս ոճիրին համար՝ համայն մարդկութիւնէն:

6-7 Սեպտեմբերի դէպքերուն համար ներողութիւն չիւնդրող կառավարութիւն մը, Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու պատրաստակամութիւնը չկրնար ունենալ:

«ԼՈՒՍԱԲԱՑ»  
ԹՈՐՈՆԹՕ

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
THE BOARD OF TRUSTEES AND PRESIDENT HAROUTUNE ARMENIAN
CORDIALLY INVITE YOU TO CELEBRATE
The Fifteenth Anniversary
OF THE
American University of Armenia
AND TO HONOR
Vartkes & Jean Barsam Jerry & Pat Turpanjian
HONORARY CHAIRS
Governor George Deukmejian Mr. Berge Sotrakian, Esq.
Dr. Rory Hume Dr. Mihran Agbabian
PROVOST, UNIVERSITY OF CALIFORNIA PRESIDENT EMERITUS, AUA
ANNIVERSARY CHAIR MASTER OF CEREMONIES
Finan Finanian Charles Ghailian
SUNDAY, NOVEMBER 12, 2006
RECEPTION 4:30 P.M. • DINNER 6:00 P.M.
THE SHERATON UNIVERSAL HOTEL
333 UNIVERSAL HOLLYWOOD DRIVE, UNIVERSAL CITY, CA 91608
RSVP by November 3, 2006
FOR INFORMATION & RESERVATION PLEASE CALL - ALINE PATATIAN (818) 262-2626 • SAVEY TUFENKIAN (818) 956-8455

# ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

## ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ



Փաստիմա Բաղաբի պատասխանատուները ասուլիսի ընթացքին

Չորեքշաբթի Հոկտեմբերի 25-ին, Փասատինայի Հ.Մ.Մ.-ի Սողանյան սրահին մէջ, տեղի ունեցաւ հրապարակային հանդիպում մը շրջանի քաղաքապետական խորհուրդի եւ ոստիկանութեան պատասխանատուներուն հետ:

Հայ Ամերիկեան Խորհուրդին (ՀԱԽ) կողմէ կազմակերպուած սոյն հաւաքին ներկայ էին տարբեր միութիւններու եւ թաղամասերու ներկայացուցիչներ, Փասատինայի քաղաքապետ՝ Պիլ Պոկարթ, Քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ Փոլ Լիթլըլ, Փասատինայի Ոստիկանապետ՝ Պեռնար Մելիքեան եւ Հրէշններու պետ՝ Տէնիս Տունզ:

Օրուան հանդիսավար Յակոբ Աճէմեան իր բացման խօսքին մէջ ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք պարզեց ձեռնարկի նպատակը որ է՝ մօտէն շփում ունենալ քաղաքի պատկան մարմիններուն հետ:

ՀԱԽ-ի Վարիչ Տնօրէն Փիթըր Տարագճեան ներկաներուն ծանօթացուց ՀԱԽ-ի աշխատանքները եւ ապա հրաւիրեց կտր սեղանի օրուան զեկուցաբերները: Անոնք՝ ամփոփ կերպով բացատրեցին իրենց մասնագիտութեան ծիրէն ներս ստանձնած պարտաւորութիւններու մասին:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հարցազրոյց:

Ներկաները հետաքրքրական հարցումներ ուղղեցին գիրենք յուզող ինդիւրներու մասին: Առաւելաբար՝ քաղաքի կրթութեան, առողջապահութեան, ապահովութեան, հեռանկարային եւ անձնական տարբեր հարցերու շուրջ, որոնց տրուեցան գոհացուցիչ պատասխաններ:

Երեկոյի վերջաւորութեան տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

It is with great hope that the Armenian community will come together for this worthwhile cause and celebration. Your support and attendance for this event will help continue the vision that was realized fifteen years ago and which continues to move AUA to new levels of accomplishment, ensuring a brighter future for Armenia and all its people.

Nellie Arslanian

# ՏԵՍԱԿԵՏ

## ԴԱՌՆ ԸԵԳՆԱՆՔԻ ՆՄՈՅՇՆԵՐ

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Ժամանակն ու պայմաններն են որ կը ծնին գրողի ու գրականութիւնը եւ գրականութեան տեսակը (ժանր): Ահաւոր երկրաշարժէ ազատած գրող մը չի կրնար կատակերգութիւն գրել: Աղէտը, տառապանքը եւ առհասարակ դժուարութիւնները գրողին հետ կը ծնին նաեւ անոր պարտաւորութիւնը՝ ժամանակին ու պայմաններուն երգիչը ըլլալու: Հեքիաթային ծծծծծ մը նստած նորահաս աղջիկն ու տղան, որոնք բնութեան գեղեցկութեան մէջ թռչուններու համանուագը ունկնդրելով գիրար կը վայելեն, չեն կրնար ողբերգութիւն մը երկնել, անոնք ատակ են քնարերգութեան:

Այս խոհերուն մղուեցայ մտածելով հայրենիքի ներկայ տխուր իրականութեան մասին, անոր ցոլացումը տեսնելով հայրենի մամուլին մէջ: Այդ տխուր իրականութիւնը շրջելու կամ բարեփոխելու անգործութեան դիմաց՝ հայրենիքի մէջ զարգացում արձանագրեց դառն հեղնանքի հարուստ գրականութիւն մը: Անոր նմոշները տեսնելու համար բաւական է աչք նետել մի քանի թերթերու վրայ, օրինակ բերելով բազմաթիւ ամիսներ առաջ հրատարակուած նման յօդուածներ՝ «Չորրորդ իշխանութիւն»ի, «Իրաւունք»ի եւ կամ «Հայկական ժամանակ»ի մէջ: Կ'արժէ լուսարձակի տակ առնել մէկ հատը անոնցմէ, որ յատկացուած էր Հայաստանի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանի իւրաքանչեւ մէկ մտադրացումին՝ միասնական շուրջպար պարելու Արագածի շուրջ, աշխարհին ցոյց տալու համար հայ ժողովուրդի միասնականութիւնը: Նա որոշել է, որ իրար հետ պիտի միասնանան օլիգարխներն որ նրանք, ու նոյն այդ օլիգարխները զրկողների դիմաց օրը 16 ժամ աշխատացնում են. ոստիկաններն ու նրանք (ժողովուրդը) ում այդ նոյն ոստիկանները ուետինի մահակներով ծեծում են», եւ կը շարունակէ, - «Բայց միասնութեան շուրջպարը... կարող է լուրջ խթան դառնալ (նաեւ) Հայաստանի տնտեսական զարգացման... Այսպէս, շուրջպարը զարկ պիտի տայ Հայաստանի գլխարկագործութեան ու սպազրական գործին: Կարուելու են 16,000 նարնջագոյն գլխարկներ, սպուելու են շուրջպարի մասնակիցի վկայականներ ժողովուրդին բաժանելու համար: Ի հարկէ փողով: Մի խօսքով, ինչպէս Քոչարեանը կ'ասէր. Նոր աշխատատեղեր, եւայլն:

Բայց դառն հեղնանքի, երգիծանքի գիտելի գործոցը հետեւեալ տողերուն մէջն է. (Այս շուրջպարին պատճառով) «Գիւղատնտեսութիւնը թուիչքաձեւ աճելու է...: Նաեւ մորթուելու է 12,000 ոչխար, իսկ դա նշանակում է որ գիւղացիների սոցիալական վիճակը կտրուկ լաւանալու է: Երկրորդ, մի ամբողջ օր մնալով բաց երկինքի տակ, 160 հազար մարդ պարարտացնելու է Արագածի լանջերը: Ինքն անկասկած, ազդելու է ապագայ բերքատուութեան վրայ:

«Շուրջպարը զարկ տալու է նաեւ հայրենի առողջապահական համակարգին: Պատկերացրէք, 160 հազար մարդ կիզիչ արեւին տակ, յայտնի չէ ինչի վրայ եկած ինչ միս են ուտում...: Անկասկած յաջորդ շաբթուայ ընթացքում բժիշկները յաճախորդների պակաս չեն զգայ: Իսկ դա, ինչպէս Քոչարեանը կ'ասէր, նշանակում է նոր աշխատատեղեր...»:

«Այս բոլոր շահաւէտ գործառ-

նութեանց զուգահեռ՝ պարզ կը դառնայ նաեւ, թէ Հայաստանում քանի մարդ է համաձայն, որ գլխաւոր դատախազը իրենց օգտագործի որպէս Դեկարացիա, իսկ նրանք, ովքեր համաձայն չեն, իսկոյն կը յայտնուեն դատախազի սեւ ցուցակում եւ կ'ընկալուեն որպէս ռեժիմի պրոթենցիալ թշնամիներ... եւ միշտ պիտի լինեն ոստիկանութեան ուշադրութեան կեդրոնում, իսկ դա, ինչպէս Քոչարեանը կ'ասէր, նշանակում է նոր աշխատատեղեր:

Հիւմըրը, երգիծանքը այնքան դառն է որ կարելի է լալ, փոխանակ խնդալու:

Հայ կեանքը Հայաստանի մէջ երբեք այսքան տխուր չէր եղած, մանաւանդ, այդ վիճակը երբեք այսքան չարութեամբ չէր օգտագործուած՝ բարոյապէս ու նիւթապէս: Դար մը, կամ աւելի առաջ, Պոլսոյ եւ Գաւառներու ազգային կեանքը եւս, ի հարկէ, ունեցած են իրենց քննադատելի եւ երգիծական տխուր կողմերը, սակայն, այդ ժամանակէն ու պայմաններէն ծներ են նաեւ ազդարարող ու խարազանող ոստիկաններ՝ յանձինս Յակոբ Պարոնեանի եւ Երուանդ Օտեանի, որոնք դառն հեղնանքի ու երգիծանքի

գիտելի գործոցներ երկներ են, ինչպէս «Ազգային Ջոջերն» ու «Ընկեր Փանջուռնի»:

Հայաստանի ներկայ ազգային-պետական կեանքը առատ նիւթ կը հայթայթեն նման գրականութեան մը համար, սակայն, տակաւին փոքր կամիթներէ անդին չունեցաւ ան: Որքան ալ ճիշդ ու դիպուկ կերպով կը բնութագրուին յանցագործները, սակայն, չգտնուեցաւ մէկը, որ Պարոնեանի նման կարենար տալ հայ Ամերիայի մը ամբողջական կենսագրութիւնը՝ «Մզկիթ մը շինեց» երկու բառով:

Անցնելով սփիւռքահայ կեանքին, հոն եւս խարազանող ոստիկաններու բացակայութիւնը զգալի է հետզհետէ զարգացող աղմկարարութեան, կողմնակալութեան, չափազանցութեան եւ կամ անտեսումի ու չափանիչներու խախտումին դիմաց: «Մերն է, ուրեմն լաւ է» մտայնութիւնը մակընթացութեան մէջ է: Առաջ եթէ «Մերն է» հասկացողութիւնը կուսակցական գուճաւորում ունէր, հիմա շատ աւելի մանրուած իմաստ ունի՝ զգենալով ազգականական, բարեկամական եւ հայրենակցական գուճաւորում: Հերիք է որ ինդրոյ առարկայ անձը վերոյիշեալ խմբաւորումներէ մէկուն պատկանի՝ բանախօսը, անշուշտ ինք

ալ նոյն խումբէն, ալ թափ կու տայ լեզուին՝ փառաբանելու համար մեծարեալին ունեցած ու չունեցած բարեմասնութիւնները եւ չափազանցելով այնքան՝ որ համակիրներուն իսկ դժգոհութեան պատճառ է:

Այս բոլորը կը մղեն եզրակացնելու որ սփիւռքահայ կեանքը անտէր ու անղեկ մնացած է. լաւագոյն պարագային, տէր կանգնողները զայն կը ղեկավարեն իրենց սեփական շահերուն համաձայն, մակերեսային կերպով եւ իրենց նեղ դիտանկիւնէն տեսնելով, եւ հետեւաբար, յաճախ սայթաքելով: Օրինակ, յայտարարել թէ հայ ըլլալու համար անհրաժեշտ չէ հայերէն գիտնալը, կամ, հայ վարժարաններ փակել, ինչպէս Մելգոնեան կը թակահար հաստատութիւնը:

Ժամանակը եկած է, եթէ ուշ չէ արդէն, որ Սփիւռքը եւս ունենայ Հայաստանի հիւմըրիսթներուն նման կամեցողները, եւ ազգայնաս մեծ սխալները խարազանողները՝ Յակոբ Պարոնեանի եւ Երուանդ Օտեանի խտուրթեամբ: Եւ մեր մամուլը պէտք է ուրախութեամբ հիւրընկալէ նման գրութիւններ, ի շահ մեր բարձրացումին, եթէ նոյնիսկ այդպիսի յօդուած մը հրատարակող թերթի մը խմբագրութիւնը համաձայն չըլլայ արտայայտուած միտքերուն:



**Թէքէեան Մշակութային Միութեան**  
**Հիմնադրութեան 60-ամեակին առիթով**  
**ԹՄՄ, Փասապինա-Կլէնսփել Մասնաճիւղը**  
**Կը ներկայացնէ**

**Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ**  
**Գերաշնորհ Յովնան Արք. Տէրպէրեանի**

**Նիւ Եորքի Սբ. Վարդան Տաճարի**  
**Շուշի Պարախումբը**  
**Իր Անդրանիկ Միակ Ելոյթով Լուս Անճելուսի Մէջ**  
**Պարուսոյց – Գեղարուեստական Դեկավար**  
**Սեդա Փասապեան-Քանթարճեան**  
**Մասնակցութեամբ**  
**Սիրուած Երգիչ Յովիկ Գրիգորեանի**  
**եւ երաժշտական Դեկավար Անդրանիկ Մուրապեանի**

**Տեղի Կ'ունենայ**  
**Կիրակի, 3 Դեկտ. 2006-ի երեկոյեան ժամը 4:00-ին**  
**Փասապինա քաղաքի Գոլէճի Մէքսըն**  
**հանդիսասրահին մէջ**  
**1570 E. Colorado Blvd., corner of Hill street**  
**(Parking For \$ 1.00 Is Available In The Structures On Bonnie & Hill Streets)**  
**Տոմսերու արժէք: \$50, \$40, \$30, – \$20**

**Տոմսերու համար հեռաձայնել հեպտեալ թիւերուն:**  
**Գրապրոն Պերճ : 818-244-3830**  
**Ապրիլ Գրապրոն : 818-243-4112**  
**Մարալ Դապարեան : 626-296-2921 8.00am-1.00pm.**

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ՀՈԳԵՔԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԴՈԿՏ. ՄԵՍՐՈՊ ԲԱԼԱՅԵԱՆ

Նախ ճշտենք այս երկու բառերի իմաստը եւ ընդգծենք դրանց սահմանները, ամեն տեսակ թիւրիմացութիւն կանխելու համար:

Հոգեբանութիւն ասելով, հասկանում ենք՝ գիտութիւն մարդկային կեանքին վերաբերող այն երեւոյթներին եւ ինդիւիդուալ մասին, որոնք դուրս են մտում ֆիզիքական, ֆիզիոլոգիական բնագաւառներին:

Թէպէտ գիտենք, որ ֆիզիքական-ֆիզիոլոգիականը եւ հոգեբանականը փոխադարձաբար ազդում են իրար վրայ, բայց, ուրիշ էլք չունենք, պարտադրաբար, թէկուզ արհեստականօրէն (աւելի ճիշտ՝ պայմանադրական կարգով, ինչպէս գիտութեան՝ բոլոր ճիւղերում) պիտի հոգեբանականի իմաստը յստակօրէն, շատ պարզ կերպով, ճշտենք եւ անջատենք լրիւ, ֆիզիքականից, ֆիզիոլոգիականից, որպէսզի երբ խօսուում է հոգեբանական այսինչ առանձնաշատկութեան մասին, դա հասկացուի ճիշտ այնպէս, ինչպէս հասկանում ենք արդի հոգեբանութեան մէջ եւ ոչ թէ իւրովի, կամ այնպէս, ինչպէս երբեմն թիւր եւ սխալ ձեւով են հասկանում հոգեկանին վերաբերող ինդիւիդուալները:

Ուրեմն, այսպէս՝ հոգեբանական գիտութիւնը խօսում է, առաջին հերթին, թէ ինչպէս ենք մենք իմացութիւն ձեռք բերում արտաքին աշխարհի մասին, կեանքի մասին (իմացական հոգեբանութիւն), ինչպէս ենք մտապահում այդ իմացութիւնը (Յիշողութեան հոգեբանութիւն), ինչպէս ենք կարողանում այդ իմացութիւնը հարստացնել (Ուսուցման հոգեբանութիւն), ինչպէս ենք կարողանում օգտագործել այդ իմացութիւնը (Կիրառական հոգեբանութիւն), ինչպէս կարող ենք այդ իմացութիւնը փոխանցել ուրիշներին, օրինակ՝ նոր սերնդին (դաստիարակչական-ուսուցողական կամ մանկավարժական հոգեբանութիւն):

Բայց մարդը, ինչպէս գիտենք, միայն միացական էակ չէ. նա ունի նաեւ զգացմունքներ, յոյզեր, յուզումներ եւ նման հոգեվիճակներ (Զգայական եւ յուզական հոգեբանութիւն):

Իսկ ինչ ենք հասկանում «գրականութիւն» ասելով:

Գրականութիւն, այսինքն արուեստի այն ճիւղը, որն արտայայտուում է լեզուով, բառերով, խօսքով:

Իսկ արուեստ ասելով՝ հասկանում ենք առաջին հերթին, գերազանցապէս՝ յօրինում, ստեղծագործութիւն: Ինչ որ կրկնողութիւն է, ընդօրինակում է, ուրեմն արուեստ չէ:

Այս յօդուածում խօսում ենք, ոչ թէ ամէն ստեղծագործութեան մասին, այլ՝ գեղեցիկ ստեղծագործութեան, այսինքն մէկ խօսքով, գեղարուեստական գրականութեան մասին:

Ուրեմն, այս յօդուածի մէջ չի մտնում օրինակ լրագրութիւնը (Journalisme), բառի նեղ իմաստով անշուշտ, որովհետեւ եթէ գեղարուեստական ակնարկի ձեւով լինի, նորից արուեստ կը դառնայ, ինչպէս անում էին յաճախ Հրաչեայ Քոչարը (Հայաստանցի գրող) եւ Իլիա Էրենբուրգը (ուսաստանցի գրող) ուղմանականից, շրջ համաշխարհային պատերազմի ընթացքում:

Մեր նիւթի մէջ չեն մտնում նաեւ յուշագրութիւնը եւ հրապարակագրութիւնը: Չնայած, շատե-

րը, դերասանապետ վահրամ Փափագեանի լոյս տեսած յուշերին էլ գեղարուեստական արժէք են տալիս: (Մանաւանդ, նրա «Յետադարձ Հայեացք»-ի գրքին):

Հին դարերից սկսած գեղարուեստական գրականութեան մէջ, մարդու հէնց առաջին փորձերին հոգեբանութիւնը ներկայ է բացառապէս եւ բացարձակ կերպով իւրաքանչիւր յաջողուած գրական երկի մէջ:

Խորանի մէջ (անյաջող գրական գործեր) մեծ մասամբ հոգեբանութիւն կամ ներկայ չէ, կամ եթէ ներկայ է, ապա խիստ խեղաթիւրուած ձեւով:

Ինչո՞ւ այս ճակատագրական-կատեգորիկ եւ անխուսափելի ներկայութիւնը: Դա բխում է հէնց գեղարուեստական գրականութեան էութիւնից:

Ասացիք, գրական երկը յօրինում է, ստեղծագործութիւն է. ուրեմն, արուեստագէտի գործը մի տեսակ աստուածային գործ է:

Յովհաննէս Շիրազն է յայտարարում՝

«Ես բանաստեղծ եմ, Երկնքի որդին».

Սակայն միւս կողմից, յօրինողը՝ բանաստեղծ կամ արձակագիր, Աստուած չէ, մարդ է:

Քանի որ մարդ է, ուրեմն, անխուսափելիօրէն ստեղծագործում է, կամայ, ակամայ, ըստ հոգեբանական օրինաչափութիւնների:

Հիմա, կամ ինքը տեղեակ է այդ բանին, կամ անտեղեակ...

Ուղեղը, մարդու անհատականութիւնը (արուեստագէտ, կամ ոչ, ենթակայ է այդ երկաթեայ օրինաչափութիւններին):

Անշուշտ, այս բոլորը, բնականոն (նորմալ) պայմաններում:

Ոչ բնականոն պայմաններում, (աննորմալ) նոյնպէս, ուղեղը կարող է ստեղծագործել, բայց ոչ թէ գրական երկ, այլ գառանցանքներ (de lire) եւ արդէն դա վերաբերում է հոգեբանութեան մի ուրիշ ճիւղին, որի գլխաւոր նիւթն է՝ «աննորմալ մարդկանց եւ երեւոյթների հոգեբանութիւնը»:

Նոյնը կարելի է ասել նաեւ բնագաւառութեան (me taphysique) մասին: Այդ բնագաւառներում եւս հոգեբանութիւնը, հոգեվերլուծութիւնը եւ հոգեբուժութիւնը կատարել են ակնառու առաջադիմութիւններ, որոնց շնորհիւ այդ գառանցանքները կարող են համապատասխան մեկնաբանման արժանանալ: Բայց դա առանձին նիւթ է:

Վերադառնալով մեր բուն նիւթին, աւելացնենք, որ այս բոլորը ինչ ասացինք, ինդրի միայն մէկ կողմն է, հիմնուած այն փաստի վրայ, որ արուեստագէտ հեղինակը, ինքը մարդ է եւ ենթակայ հոգեբանական գիտութեան օրինաչափութիւններին: Ուրեմն, այդ բանաստեղծ-մարդը, երբ ստեղծում է գրական երկը, այդ երկում երեւան է բերում կամայ թէ ակամայ, իր եսը, այդպիսով թէ՛ ինքը եւ թէ՛ իր ստեղծագործութիւնը ենթակայ եւ մեկնաբանելի են, միայն հոգեբանական բանաձեւերով:

Մի ուրիշ նոյնքան կարեւոր կողմն այս ինդրի, այն է, որ նորմալ պայմաններում, իւրաքանչիւր հեղինակ գրում է ընթերցողի համար: Որոշները կարող են ասել՝ «Ես գրում եմ միայն ինձ համար». այսինքն միայն մէկ ընթերցող ունեմ, յանձին ինձ: Ի պատասխան

մենք կ'ասենք՝ հոգ չէ թէկուզ գրողը ունենայ միայն մէկ ընթերցող, նորից ենթակայ է անխուսափելիօրէն, հետեւեալ ակսիոմային, որ պիտի բացատրեմ: Որպէսզի, նա իր գրածը հասկանայ, ըմբռնի, վայելի, կամ թէկուզ ասենք, գոնէ իր վրայ թողնի մի թեթեւ էֆեկտ, դա պիտի անհրաժեշտաբար գրուած լինի ըստ հոգեբանական ընդհանուր օրինաչափութիւնների:

Այստեղ հոգեբանական օրինաչափութիւններին աւելացրի «ընդհանուր» էպիտետը:

Իրապէս, եթէ բանաստեղծը այդ ընդհանուր օրինաչափութիւնները նկատի չառնի, մէկ շաբաթ յետոյ այդ բանաստեղծութիւնը իր վրայ ոչ մի էֆեկտ չի թողնի: Ինքը իր գրած, յօրինածը չի հասկանալ: Ես դիտաւորեալ «էֆեկտ» բառն եմ գործածում, այսինքն ամենաթոյլ, ամենանուազ, մեղկ մի սպաւորութիւն. օրինակ՝ շատ թեթեւ մի թախիծ, կամ թեթեւ ուրախութիւն, կամ որեւէ թեթեւ ապրում-հոգեվիճակ:

Այստեղ ես շատ ազատամտօրէն մտեցայ գեղարուեստական գրականութեան իմաստին եւ փիլիսոփայութեանը, բաւարարուելով տարտամ մի հոգեվիճակով՝ էֆեկտ:

Եթէ ոչ, արդեօք գրականութեան առաքելութիւնը միայն էֆեկտ ստեղծե՞լն է ընթերցողի ներաշխարհում:

Ապա, ո՞ւր մնաց գրականութեան մարդկային, համամարդկային, գաղափարական, հայրենասիրական, դաստիարակչական եւ գլխաւորը՝ պատգամային առաքելութիւնը:

Ներկայիս ամենայնախոհ, ամենադեմոկրատ մարդիկ ընդունում են, որ իւրաքանչիւր գրական երկ պիտի ունենայ իր պատգամը: Բայց ես շարունակում եմ խօսքս, էֆեկտի մարդու եւ ոչ թէ գրականութեան բարձրագոյն առաւելութիւնների մասին:

Ամենածայրահեղ օրինակը վերցնենք, որպէսզի լրիւ պարզ լինի, թէ գրականութիւնը, չի կարող մի վայրկեան անգամ հոգեբանութեան բարեբար եւ ճշունդ ծանրութիւնից դուրս գալ:

Մեր ամենաբնական, ամենաստորին (գիտական առումով, ոչ թէ բարոյական) հակումների վրայ էլ ազդելու համար, դարձեալ հասկանալի բառեր եւ հնչիւններ են հարկաւոր: Այսինքն, ընդհանուր լեզուն պիտի գործածէք:

Որոշ նորարարներ, օգտագործելով «հոգեվերլուծութիւն» կոչուած, Ֆրոյդի ուսմունքի մէջ գործածուող, «անգիտակցական» (Inconscient) գաղափարը, ասում եւ պնդում են, թէ՛ «մենք գրում ենք ընթերցողի «անգիտակցականի» վրայ ազդելու համար: Այդ պատճառով մենք չենք ենթարկում մարդկային գիտակցականին վերաբերող եւ մարդկային բանականութեան կողմից պարտադրուած չափանիշներին, Փիաթէի ասելով «Սխեմաներին»:

Այս խօսքը ճիշտ չի կարող լինել, քանի որ ձեր գործածած բառերը, առաջին հերթին (հէնց Ֆրոյդի խոստովանութեամբ), պիտի ազդեն եւ ընկալուեն մեր «գիտակցականի» (conscient) վրայ, յետոյ անցնեն «անգիտակցականին»:

Բառը, առաջին հերթին հնչիւն է, մեր ուղեղի համար, նոյնպէս բառերից կազմուած նախադասութիւնը, բայց եթէ դրան կցուած չլինի որոշակի իմաստ, դա չի ընկալուում եւ երբ ընկալուեց երբեք

չի անցնի անգիտակցականին (չափահաս նորմալ մարդու մօտ):

Իսկ վաղ տարիքի երեխայի մօտ (օրինակ՝ 6 ամսականից մինչեւ 2 տարեկան), այո, որպէս ստակ ձայնային էֆեկտ, կարող է անցնել անգիտակցականին եւ այնտեղ խուճապ ստեղծել:

Բայց արդեօք, այդպիսի նորարարները դրանք գրում են երկու տարեկան երեխաների համար եւ նրանց ուղեղներում խուճապ եւ աւելորդ ու վտանգաւոր անգամագ հնչեցնելու համար:

Անտարակոյս, նրանք «ոչ» կը պատասխանեն այս հարցին: Ի դէպ, մենք հոգեբանական տարրալուծաբանութեան կարողացել ենք, անտակտ եւ ժխորային ձայներ ստեղծելով, անձկութեան, ստրեսային ծայրահեղ հոգեվիճակ ստեղծել մկներին մօտ, որոնցից մի քանիսի մօտ, նոյնիսկ սրտի կաթուածի է յանգել:

Միջանկեալ ասենք, որ ներկայումս, ինչպէս գիտենք, մեծ քաղաքներում արժարժուում է ո՛չ միայն ամենի պայքար օդի ապականութեան, այլ նաեւ ձայնային ապականութեան դէմ:

Նոյնիսկ, գրական իմաստով (alliteration) ձայնային էֆեկտ ստեղծել փորձող բանաստեղծներն եւս, թէ աշխարհում (օրինակ՝ Փոլ Վեռլենը՝ Ֆրանսայում) եւ թէ հայերիս մօտ (Վահան Տէրեանը, գործիւնակ), շատ հետեւանք եւ շատ հետեւորդներ չունեցան: Վահան Տէրեանի աշնային երգերի մէջ՝ «աշնան մշուշին, շշուկ եւ շրշիւն», չնայած որ մի քիչ էլ հաճելի են հնչում ականջին (քանի որ այդ շ-երի կրկնութիւնը մի քիչ չի շեղում է աշնան ձայնը), այդուհանդերձ գրականութեան մէջ շօշափելի հետքեր չ'ընդհանրեցին:

Հետագրքեր է նշել, որ նոյնը մօտաւորապէս կրկնուեց երաժշտութեան աշխարհում:

Տարիներ առաջ Եւրոպայում մեծ ազդուկ հանեց Շտոկհոլմից իր արտառոց երաժշտութեամբ, որ բաղկացած էր մի երաժշտական քննադատի դիպուկ խօսքերով երկու բանից. առաջին՝ բացարձակ լուռութիւնից եւ երկրորդ՝ ճաքած դոյլերի բախումից առաջացած ձայներից, որ պարզ է, ոչ մի ընդառաջում չգտաւ եւ հիմա, խօսք անգամ չկայ նրա մասին Եւրոպայում:

Բայց դեռ կայ մի ուրիշ կողմ, այս կարեւոր ինդրի:

Հին դարերից մնացած արուեստի նմուշները՝ հին Եգիպտոսից (4-5 հազար տարի առաջ), Յունաստանից (2500 տարի առաջ), Հայաստանից (2000 տարի առաջ) առնուած «Գողթան երգեր» գործիւնակ) մեզ ցոյց են տալիս եւ վկայում, որ այդ հին ժամանակներում եւս, գրողը, բանաստեղծը, գուսանը գիտէին որ իրենց յօրինուածքը պիտի լինի ճշմարտանման, անմիջականօրէն մատչելի, եթէ ոչ, մարդկանց չի յուզի, ո՛չ մի ազդեցութիւն չի թողնի, հետեւապէս ընթերցող, ունկնդի՛ր, դիտող չի ունենայ:

Բոլորը այս կէտը լաւ գիտեն եւ գրականութեան տեսութեան մէջ կարգում ենք այս անհերքելի սկզբունքը, որ գեղարուեստական գործը, առնուած պիտի ճշմարտանման լինի, որպէսզի համոզիչ լինի, եթէ ոչ իր առաքելութեան եւ կոչումին չի ծառայի:

Մենք սիրում ենք եւ հիանում համաշխարհային գլուխ գործոցներով. նրանք երբեք չեն հնանում, ժամանակավրէպ չեն դառնում, որովհետեւ ճշմարտանման էին:

(Շարունակելի)

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
**ARMENIAN ATHLETIC ASSOCIATION**



JOIN US IN CELEBRATING

**85<sup>th</sup>**

**ANNIVERSARY  
 DINNER-DANCE**

ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

**Saturday**

**November 11, 2006**

**8:00 PM**

PERFORMING LIVE

**HAROUT  
 PAMBOUKJIAN**

**& DJ TRONIX**

**Verdugo Hills Country Club  
 400 W. Glenoaks Blvd., Glendale**

For Info Call  
**626-429-8366**



# ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԻՄ ՅՈՒՇԵՐԻՑ

## ԱԻՑՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

1930-31 թուականներին Արաքի շրջանի մէջ գտնուող Քեազազ գաւառի ամենամեծ եւ զուտ հայաբնակ գիւղը Քալաւան էր: Արեւմտեան կողմից կից է Ազնա գիւղին, որն այսօր է իր կանաչ եւ գեղատեսիլ դաշտերով եւ լեռներով: Արեւելեան կողմում է Աքբարաբազ գիւղը: Ժողովուրդը ապրում էր հանգիստ եւ խաղաղ պայմաններում: 1927 թուից սկսեցին մեր շրջանները այցելել մի շարք տարագիր մտաւորականներ եւ ուսուցիչներ, որոնք 1920 թուականին հասել էին Թաւրիզ: Դրանք մեր շրջանի հայոց դպրոցներում սկսեցին պարապել հայ աշակերտուհիների հետ, սովորեցնելով հայոց լեզուն եւ պատմութիւնը: Դրանցից չիլեմ Պրն. Չաք-տէոսին, որն յետագային 1935 թուին Ատրպատականի ժամանակի առաջնորդ Մելիք Թանգեան Սրբազանի ձեռամբ օծուեց քահանայ: Այդ ուսուցիչներից չիլեմ Գեղամ Կիրակոսեանին, վարդգէս Ֆրանգեանին, Ներսէս Ներսիսեանին, Պրն. Մկրտիչին եւ իր տիկնոջը, վարդան Դաւթեանին եւ Միհրան Գրիգորեանին որն շրջանային տեսչի պաշտօնն էր ստանձնել: Նա մեծապէս յարգուած եւ սիրուած էր շրջանի հայութեան կողմից: Քալաւա գիւղում եւ միւս շրջաններում ստացուած էր Թեհրանում լոյս տեսնող հայերէն թերթերը: Արաք քաղաքի հայ բնակիչներից Մարտիրոս Ասատրեանը որն քալաւեցի էր, յաճախ գալիս էր գիւղ, իր հետ բերելով հայերէն գրքեր եւ թերթեր ու նիւթապէս շատ էր օգնում գիւղին: Նրա հայրը Շահվերդի Ասատրեանը գիւղի եկեղեցու երկար տարիների դպրապետ եւ սարկաւազ էր: Նա իր հոգեպարար ձայնով երգում էր մեր շարականները հիացնելով հաւատացեալներին: Նրա համբաւը տարածուել էր շրջանի բոլոր գիւղերում:

Քալաւա գիւղում ունէինք երկու քահանաներ: Տէր Արսէն Քհնյ. Տ. Բարսեղեանը տասնեակ տարիներ ամենայն նուիրուածութեամբ հովուեց եւ 1935 թուին, 90 տարեկան հասակում վախճանուեց: Տէր Հօր յուղարկաւորութեան եւ թաղման կարգը կատարուեցին շրջաններից եկած եօթը քահանայ հայրերի միջոցով: Խուռներամ ժողովուրդը եւ դպրոցական աշակերտները մասնակցեցին Տէր Հօր թաղման արարողութեանը: Արժանաւոր հոգեւորականի թաղումը շատ մեծ տպաւորութիւն թողեց հարեւան ժողովուրդների վրայ: Երանի յարգանքի եւ խոնարհութեան այդ զգացումները փոխանցեցին գալիք սերունդներին: Քալաւա գիւղի եկեղեցին կոչւում է Ս. Յակոբ, որն 300 տարուայ անցեալ ունի: Մեր գիւղը այսօր թէեւ հայաթափուած, բայց եկեղեցին կանգուն է: Տարին մէկ անգամ Թեհրանից եւ շրջաններից մեծ թուով հայեր այ-

ցելում են Քալաւա, եւ եկեղեցում մատուցում է Ս. Պատարագ: 1983 թուին Թեհրանաբնակ մի խումբ երիտասարդներ ի նպաստ եկեղեցու նորոգման, հանգանակութիւն կատարեցին եւ հիմնովին վերանորոգեցին Ս. Յակոբ եկեղեցին: Ինչպէս նշեցի, ժամանակին մեր եկեղեցին ունէր երկու քահանայ եւ ութը սարկաւազ եւ դպիր: Յիշեմ դրանց անունները: Սարկաւազներ՝ Շահվերտի Ասատրեան, Յակոբ Կարապետեան, Պապան Միրզախանեան, Յակոբ Հախվերդեան, Զաքոս Տէր Գէորգեան, Պապան Խուղաբախշեան, Արմենակ Սարգարեան եւ Միրաք Մինասեան:

Ինչպէս նշեցի, տարին մէկ անգամ Ս. Աստուածածնի տօնի օրը, այցելութիւն է կազմակերպում դէպի Քալաւա, եւ Ս. Յակոբ եկեղեցում կրօնական արարողութիւնից յետոյ կատարում է խաղողօրհնէք եւ հնչում են եկեղեցու զանգակները: Այդ շրջաններում եկեղեցու զանգերը իրենց հնչողութեամբ յայտնի են բոլորին: 1935 թուին Արաքի հոգեւոր հովիւ Տ. Ղազար Քահանայի ջանքերով եւ ժողովրդի նիւթական օժանդակութեամբ գետեղեցին եւ տեղադրեցին զմբէթի վրայի Ս. Խաչը որն կանգուն է մինչեւ այսօր: Նշեցի արդէն որ Բ. աշխարհամարտից շատ առաջ Քալաւա գիւղում ունէինք հինգրոսեան հայոց դպրոց, որտեղ հարիւրաւոր գեղջուկ երեխաներ ստացան հայեցի կրթութիւն: Հայ գիւղացիները ապրում էին խաղաղ ու երջանիկ: Տարին վեց ամիս աշխատում էին դաշտերում, իսկ միւս ամիսներին երբ սկսում էր ցրտաշունչ ձմեռը, մարդիկ քաշուում էին իրենց տները: Այդ ամիսներին ժողովուրդը վայելում էր իր մառաններում ամբարած բարիքները: Սկսում էին հարսանիքները: Ամէն գիշեր խումբ-խումբ հաւաքուում էին տներում, հանդիպում բարեկամներին, զրուցում, առակներ եւ հեքիաթներ պատմում: Այսպէս ամբողջ ձմեռը հայ գիւղացիները ապրում էին խաղաղ ու հանգիստ: Տարեցները պատմում էին իրենց անցեալ օրերից դրուագներ եւ յուշեր:

Չորս դար առաջ Շահ Աբասի կողմից Հայաստանից ուժով տեղահանուած մի քանի հարիւր հազար հայեր որոնք տեղաւորուել էին Սպահան, Նոր Զուղա քաղաքներում, Չարմահալ, Փերիա գաւառներում, ինչպէս նաեւ Սուլթանաբատ (յետագային Արաք) քաղաքի շրջակայքի գիւղերում, դարերով ապրեցան լեռնային այդ շրջաններում, բայց եւ այնպէս ամուր կառչած մնացին իրենց հաւատամքին, կրօնին եւ լեզուին:

Այսօր թէեւ հայաթափուած, բայց որոշ գիւղերում ապրում են քիչ թուով հայեր, որոնք պահել են իրենց ազգային դիմագիծը եւ հայկականութիւնը:

# ԲԱԶՈՒՄ ԱՂՍՈՒԿ ՅԱՆՈՒՆ ՈՉԻՆՉԻ

## ԺԵՆԻՍ ԲԻԱՆՔԻ

Ինչ են թողել, ինչի համար են աղմկում: Քոչրեր, եղբայրներ, մինչեւ ե՞րբ լուենք:

Երկիրը մեր հինգ հազարամեայ հողերի վերջին բեկորը, մեր ազգը, մեր երկրի ապագայ սերունդ երիտասարդութիւնը, մեր կրօնը, մեր երկրի հարստութիւնը, մեր ընտանեկան բարոյական մաքրութիւնը, օր առ օր, ժամ առ ժամ ամէն ինչ ձեռքից գնում է:

Մեր հարեւանները վաղուայ համար եաթաղաններ են սրում: Իւղտուած գրպանները փուչիկ են դառել, լայնանում են, չեն լցւում: Ուրիշ ազգի մեծերը, ամբողջ կեանքում հազիւ են կարողանում պիլիոնատէր դառնալ, մեր հայրենի դրամա-աթոռապաշտները վեց-եօթը տարում արդէն ամէն մէկը մէկուկէս պիլիոն տոլարի տէր է դարձել: Ո՞վ կը համարձակուի հարցնել ո՞րտեղից եւ ինչպէ՞ս դիզուեց: Դէ՛, մարդիկ չօ յիմար չեն, վատ լուրը շուտ է տարածուած: Խեղճ հայ ազգ, մի մասը իւղտուած է, մի մասը գլխատուած, մի մասն էլ գլուխը վրան պահելու համար լուռ ու կլում: Հայրենիքի հողը ծախուած է, ծախուած: Քոնեակը ֆրանսացուն, Նայիրին անգլիացուն, Թէլը յոյնին, ոսկին, պղինձը ռուսին, Հրազդանի Ռէկը... որ մէկն ասեմ: Դէ՛, մնացած կտորներն էլ... բա մեր իշխանաւորներն ի գո՞ւր են պայքարում աթոռները պինդ պահել, գիշերն էլ շալակում տանում սուռն:

Խեղճ Քիւրք Գրիգորեան եւ շատ ու շատ նմանները, ինչ յոյսերով մօտեցան Հայրենիքը կառուցելու: Իրենց գլխին էլ փափախ գնաց: Եւ այս բոլոր օտարները, Հայրենիքը կը շնայեցնեն, այո, յարմար առիթով էլ կը ծախեն թուրքին ըստ իրենց սովորութեան: Թող հայը պոռայ աշխարհով մէկ, որ մենք առաջին քրիստոնեան ենք, որ մենք զարգացած ազգերի շարքում ենք, որ մենք

բարձր մշակույթ ունենք, որ մենք էլ յայտնի գիտնականներ, աստղագետներ ունենք եւ ունեցել ենք, որ մեր տարեթիւր մինչեւ Յիսուսի գալը 2492 թիւն էր, որ... որ... որ... Բայց չմոռանայ պոռալու որ մենք անմիաբան ենք, որ մենք իրարու լաւը չհանդուրժող ենք, որ մեր դաւաճանները անհաշիւ են, որ հայ ազգի մէջ դիւանագէտ չի եղել, չկայ եւ չի լինի, ահա թէ ինչու ենք կորցրել մեր 360,000 եւ կորցնում ենք եւս 29,000ը: Մի նոր կէտ կայ, որ մենք վերջերս եղել ենք նաեւ դրամա-աթոռապաշտ, որ սրանց ուղեղը միայն մի աստուծոյ է պաշտում՝ ԴՐԱՄ եւ «ինձնից յետոյ ջրհեղեղ»:

Ի՞նչ ծիծաղելի յոյսերով էք սպասում նոր ընտրութիւններին: Այս անկտուտը ճիշտ տեղին է: Մի պառաւ կին աղօթում էր թագաւորի երկարակեցութեան համար: Թագաւորը լսում է գալիս է այդ պառաւի մօտ ու հարցնում «ես որ այսքան չար ու դաժան թագաւոր եմ, ինչո՞ւ ես աղօթում իմ կեանքի համար», պառաւը պատասխանում է «Տէր թագաւոր, ես աղօթեցի որ քո հայրը մահանայ եւ դու եկար, հօրիցդ աւելի չար ու դաժան եղար, վախենում եմ քո որդին էլ քեզնից աւելի դաժան լինի»:

Հիմա հայ ժողովուրդն է, ազգ ու երկիր ձեռքից գնում է, պատառ-պատառ է լինում, մաղուած, քամուած, ազգը ցրուած, օտարանում, հալուած եւ պահանջում են որ Քոչարեանը փոխուի: Տօ տնաչէն, նա չեղաւ Սերժն եղաւ, նա չեղաւ յաջորդը, նա չեղաւ միւս յաջորդը: Յետո՞յ: Ի՞նչ պիտի փոխուի: Բոլորն էլ աթոռ պաշտող, ազգ ու երկիր ծախող, ուրացող, պիլիոններից չկշտացող: Աստուածատուր, երկիրը կառուցող շախմատիստին ձեռքից տուեցիք: Օրուայ ընդդիմադիրները ժողովրդից մանդատ էին պահանջում, նրան ֆիզիքապէս

Շարք էջ 18


**HARUT DER-TAVITIAN**  
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202  
Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233  
Fax: 818/502-3244  
Pgr.: 818/608-9898  
info@excellhye.com  
www.excellhye.com

**EXCEL**  
HYE INSURANCE SERVICES

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL



**ART PHOTOGRAPHY**  
JACOB DEMIRDJIAN  
TEL(626)795-4493

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.*



**AGBU-AYA**  
**Alex Manoogian Center**  
**Ladies' Committee**

*Invites you to attend*

*A*  
*Very Special*  
*Thanksgiving*  
*Dinner*

with a Musical Program

**Saturday, November 18 - 7:30PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER  
BOYAJIAN HALL  
2495 E. Mountain Street  
Pasadena, CA 91104

DONATION:  
Adults \$35  
Children 12 and under \$15

*RSVP by November 10, 2006*  
*by calling the AGBU Alex Manoogian Center*  
*(626) 794-7942*

**NEW YEAR'S EVE**  
**DINNER-DANCE**

ORGANIZED BY AGBU - AYA  
GLENDALE-PASADENA CHAPTER

ENTERTAINMENT  
&  
SURPRISES

**SUNDAY, DECEMBER 31, 2006**  
**8:00PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER  
2495 E. MOUNTAIN STREET  
PASADENA, CA 91104

*Music by DJ Heartbeat*  
*Catering by La Fogata*

Special Program and Menu for  
Children in a Separate Hall

Adults \$75  
Children 12 and under \$35  
Children 5 and under Free

**RSVP - LIMITED SEATING**  
*Call the AGBU Alex Manoogian Center*  
*(626) 794-7942*

**AGBU CENTENNIAL SPONSORS**

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • [commercecasino.com](http://commercecasino.com)

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

**BANK of ORANGE COUNTY**  
Commercial Real Estate  
Term Loans and Lines  
Free Business Checking  
High Rate Money Market

**Contact:**  
Gus Ghusayni  
Senior Vice President  
411 N. Central Avenue  
Glendale, CA 91203  
[bankoforangecounty.com](http://bankoforangecounty.com)  
(818) 548-2720

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՈՒԹՊՈՒԼ

ՐԱՅ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐԸ ԶԱՆՈՂԵՑԱՆ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

Ֆուտբոլի Հայաստանի մինչև 19 տարեկաններու հաւաքականը, Կիպրոսի մէջ ընթացող Եւրոպայի առաջնութեան ընտրական փուլի 3-րդ մրցումին 1-4 հաշիւով զիջեցին Հունգարիային եւ դուրս մնացին հետագայ պայքարէն: 7-րդ խումբի միւս խաղին Ատրպէյճանը եւ Կիպրոսը 1:1 հաշիւով աւարտեցին հանդիպումը, որը թոյլ տուաւ որ Ատրպէյճանցիներուն Հունգարիայի հաւաքականի հետ շարունակեն պայքարը յաջորդ հանգրուանին:

Հայաստանի հաւաքականը առաջին խաղին պարտութիւն կրեց Ատրպէյճանէն 1-2 արդիւնքով, իսկ երկրորդ խաղին յաղթեց Կիպրոսին 1-0 արդիւնքով:

ՇԱՒԱՍ

ՊԱՏԱՆԻ ՈՌԲԵՐՏ ԱՂԱՍԱՐԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Աճարեայի մայրաքաղաք Պաթումիում աւարտուեց 8-18 տարեկանների տղաների եւ աղջիկների շախմատի աշխարհի առաջնութիւնը, որին մասնակցեցին 30 հայ շախմատիստներ: Ամենայայտնողը հանդէս եկաւ 12 տարեկան Ռոբերտ Աղասարեանը՝ 9 միաւորով դառնալով իր տարիքային խմբի աշխարհի չեմպիոն:

18 տարեկանների պայքարում 8 միաւորով փոխչեմպիոն հռչակուեց Հրանդ Մելքոնեանը: Մետալ նուաճելու հնարաւորութիւն ունէին եւս 2-3 հայ պատանիներ, որոնք սակայն բաւարարուեցին լաւագոյն տասնեակ մտնելով:

Աղջիկների պայքարում Հայաստանի ներկայացուցիչները ոչնչով աչքի չընկան: Ամենաբարձր արդիւնքը ցուց տուեց 10-ամեայ Սուսաննա Գաբոեանը՝ 7 միաւորով գրաւելով 11-րդ հորիզոնականը:

ԲԱԶՈՒՄ ԱՂՄՈՒԿ ՅԱՆՈՒՆ ՈՉԻՆՉԻ

Շարունակուած էջ 16-էն

ոչնչացնելու: Եւ այս բոլոր ցաւերը, աւերները թողած մեր սիրելի գրագէտները կոյր ու խուլ ձեւանալով, քայլերով փոխելով, ուղղագրութիւն փոխելով ազգի աչքին թող են փչում, որ վերոյիշեալ բոլորը, մատերի արանքով նայենք:

Գալով նոր քայլերով, նշանակում է Հայրենիքի մնացած աղօտ սէրն էլ պոկել հայի սրտից, զգացումներից, հոգեկան վառ ապրումներից: «Մեր Հայրենիք» իր բառերով ու եղանակով շողախուած է մեր արեան իւրաքանչիւր բջիջի հետ ու մեր հոգու եւ զգացումների հետ: Դրանով է որ Հայրենիքի սէրն ու զոհաբերութիւնը կերտում է:

Ես որտեղ եւ ինչ պայմաններում էլ եղել եմ, թէկուզ TV նայելիս, միշտ ոտքի եմ կանգնել: Որի հետ էլ

խօսել եմ իմ կարծիքին են:

Առական ասում է: - Մի գիժ մի քար գցեց հորը, քառասուն խելօք հաւաքուեցին չկարողացան հանել: Հիմա մի քարը հենց մեր ուղղագրութիւն փոխելն էր, մէկ քարն էլ մեր ոգի ներշնչող քայլերով: Կարծես հագուստ է, հնացել է փոխենք: Իսկ այնտեղ, հեռուում հայրենի հողն իր բնական բերքերով ծախուում, ծախուում, ծախուում... բայց, ոչ հայրենիքի շահի համար:

Գրչի մարդիկ կամ կտորէք ձեր գրիչը կամ ոգի, շունչ տուէք հայ երիտասարդին, այս կանաչ թղթի աշխարհում: Թող մէկը առաջ գայ, քայլ վերցնի, հայրենիքը փրկելու ոտիները, գայլերի վոհմակների ճիրաններից եւ կերտի հզոր եւ անմահ Հայրենիք, քանի իմ աչքը դեռ բաց է, որ գնամ եղեռնի Ձոհերին պատմեմ:

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Փաստաթղթայի մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատատեղիներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութբոլի առաջնութեան տասերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Arsenal vs Tottenham, Liverpool vs Manchester City, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Rank, Team, P, W, D, L, Points. Lists top teams like Arsenal, Liverpool, Manchester United.

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ կրմանիոյ ֆութբոլի առաջնութեան իններորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Bayern Munich vs Borussia Dortmund, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Rank, Team, P, W, D, L, Points. Lists top teams like Bayern Munich, Borussia Dortmund.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութբոլի առաջնութեան ութերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Juventus vs Lazio, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Rank, Team, P, W, D, L, Points. Lists top teams like Juventus, Lazio.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութբոլի առաջնութեան տասնմէկ երրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Lyon vs Marseille, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Rank, Team, P, W, D, L, Points. Lists top teams like Lyon, Marseille.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութբոլի առաջնութեան ութերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Real Madrid vs Barcelona, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Rank, Team, P, W, D, L, Points. Lists top teams like Real Madrid, Barcelona.

# ՇԱՐԱԹԻ 27-Ը ՉՅԻՇԵԼԸ ՁԵՌՆՏՈՒ Է ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Շարունակում է 5-էն

ինչ-որ մի տեղ արտայայտուել է դրա մասին, եւ դա օգտագործուեց, որ տղայի գլխի սարքին: Մենք անհամբեր սպասում էինք, որ Նադրալեանը Յունուարին դատարան գար, եւ լիշո՞ւմ է.ք՝ Օլեգ Երուսաղեմը տեսաերիզը տարաւ Մոսկուա՝ փորձաքննութեան եւ ապացուցուեց, որ իսկապէս տաբերութիւն կա եղած տեսաերիզի եւ իրական գործողութիւնների ժամանակների միջեւ. դատարանն էլ արձանագրեց, որ կա անհամապատասխանութիւն ժամանակային առումով, իսկ այդ անհամապատասխանութիւնը ո՞վ պիտի պարզեր. Նադրալեանը, ու նա յանկարծ վերացաւ, Տիգրանը Նազարեանն էլ մեկնեց ԱՄՆ»:

Տիգրան Բախչեանն այլեւս չի հաւատում գործի բացայայտմանը. «Այսօրուայ իշխանութիւնը ահաբեկչութիւնը ոչ թէ բացայայտել, այլ կոծկել է, պրոֆեսիոնալիզմն էլ էր պակասում, ուղղմական ուստիկանութիւնից սկսած, դատարանով վերջացրած: Բայց այժմ, եթէ անգամ իշխանութեան գա այնպիսի ուժ, որն ունենայ այս յանցագործութիւնը բացայայտելու քաղաքական կամք, իր համար էլ է շատ դժուար լինելու, շատ հետքեր են վերացրել:

Երբեմն բացում եմ դատարանում արած իմ գրառումները եւ կարդում այն հարցերը, որ այդ րոպէին մէջս ծնուել են. եւ գիտէք, այդ հարցերի պատասխաններն այդպէս էլ չտրուեցին: Իմ վերջին խօսքում յայտարարեցի, որ մեղադրում եմ դատարանին անգործութեան մէջ, որովհետեւ դատարանը ոչինչ չպարզեց, որ մենք այսօր՝ դատավարութեան աւարտին գիտենք այնքան, որքան 99թ. Հոկտեմբերի 28-ին էր յայտնի, որ նոյնիսկ չպարզուեց, օրինակ, թէ Արմենակեանին ով է սպանել: Սակայն դրան դատարանը չանդրադարձաւ, իսկ Արմենակեանի կինը վրդովուեց, ասելով թէ ինչ կապ ունէք դուք իմ ամուսնու սպանութեան հետ: Սա է, առուծարի է»:

Տիգրան Բախչեանի խորին համոզմամբ, Մուշեղ Մովսիսեանն էլ պատահական գոհ չէր. «Մուշեղ Մովսիսեանը ունէր լանցանք, ինքը մասնակից էր, ես համոզուած եմ, բայց այդպէս էլ դատարանը փաստօրէն չանդրադարձաւ դրան. ամենահեշտ ձեւն էլ այն էր, որ ինքը խմէր, աւտովթարի ենթարկուէր: Աստուած մեղք չհամարի, բայց քանի որ ամբողջ դատավարութիւնը կոծկելով անցաւ իմ աչքի առաջ, դրա համար, ես ընդամէնը ենթադրութիւններով եմ խօսում, բայց հակառակ ենթադրութիւն էլ անել չեմ կարող»:

## «ԻՆՔՍ ԵՍ ՓՈՐՉՈՒՄ ՅԻՇԱՍԱԿԸ ՎԱՌ ՊԱՅԵԼ՝ ԱՇԽԱՍԵԼ, ԿՐԹԵԼ»

Մեռելասէր ազգ ենք, թաղումներ պաշտող ազգ ենք, այսպէս երբեմն մեղադրում են հայ ժողովրդին իր իսկ գաւակները, եւ յայտարարում, թէ բաւական է ետ նայել, պէտք է առաջ նայինք ու առաջ գնանք. եւ հենց այս ենթատեքստում էլ կարող են տեղաւորել Հոկտեմբերի 27-ն այդքան շուտ մոռացութեան տալու մոլուցքը:

Անահիտ Բախչեանը նկատում է. «Այո, մենք պէտք է սպազային նայինք, բայց այդ մարդիկ էլ են չէ՞ մասնակցել այդ սպազայի կառուցմանը: Ետ նայելու հետ պէտք է քառապատիկ ջանք դնենք սպազայի կառուցման վրայ: Ես չեմ ասում ամբողջ օրը դրա մասին խօսենք, բայց տարին մի անգամ Հանրային հեռուստատեսութեամբ պէտք է ասուի, որ այդ սեւ օրը պառլամենտում գլխատուեց պետութիւնը: Հանրայինը նման բան չի ասի, որովհետեւ նրա կարծիքով պետութիւնը «Միասնութիւն» դաշինքը չէր, բայց իրականում հենց «Միասնութիւնն» էր: Ձի ասուում, չի արւում»:

Անահիտ Բախչեանն իր օրինակով է սպազուցում, որ պէտք է առաջ նայել: «Ես սրբօրէն իրականացնում եմ պետութեան նկատմամբ Եւրոպայի կիսատ թողած պարտականութիւնները եւ պատգամները: Անցած 7 տարիների ընթացքում ես իմ աշխատանքով եմ Եւրոպայի յիշատակը վառ պահում, գործ եմ անում, կրթում, դաստիարակում եմ սպազայի ճիշդ քաղաքացիներ, ոգեշնչում եմ երեխաներին իմ օրինակով, աշխատում, որ բացառուեն նման դէպքերն սպազայում»:

\*\*\*\*\*

3.9. Չրոյցի վերջում տիկին Բախչեանն անդրադարձաւ վերջերս ՍԱԿ խմբակցութեան ղեկավար Գուրգեն Արսենեանի յայտարարութեանը, թէ Արամ Սարգսեանի վարչապետութեան օրօք տնտեսութիւնը ոչ թէ աճել, այլ հետընթաց է ապրել. «Իհարկէ Արամ Չաւենի Սարգսեանը իմ պաշտպանութեան կարիքը չունի, բայց ես վիրաւորուել եմ այդ յայտարարութիւնից: Ինչքան պիտի մարդկային զգացմունքներից զուրկ լինես, որ մեղադրես մարդուն դրա համար: Ընդամենը 6 ամիս էր Արամը վարչապետ, ի՞նչ էր այդ ամիսներից նրա, նրա ընտանիքի, մեր երկրի վիճակը, այդ վիճակի մէջ տնտեսական աճ էր ակնկալուում: Մի իրեն դնէր այդ վիճակի մէջ. պատկերացներ, թէ ինչ է ապրել Արամ Սարգսեանը, թէ ինչ էր կատարում այդ ամիսներից երկրում, ու՞ր էր ինքը այդ ժամանակ եւ հետաքրքիր է ինչով էր զբաղուած»:

## ՊԱՏՐԱՍՏԵՑ ԴԻԱՆԱ ՄԱՐԿՈՍԵԱՆԸ

# ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՈՒԻՐՈՒԿՆ Զ.Բ.Ը.Մ.-Ի 100-ԱՄԵԱԿԻՆ

Շարունակում է 7-էն

եան, Դոկտ. Մաթիու ձէնտեան, Դոկտ. Անի Մուղամեան, Ռամբլա Գրիգորեան-Ապպամօնթեան, Դոկտ. Սիրլիա Գարայեան եւ Գարօլ Ասլանեան:

Ճաշի դադարէն ետք՝ ելուցիք ունեցաւ օրուան գլխաւոր բանախօս՝ Փոլ Իկնէշըս (Պօղոս Իգնատիոսեան): Իրեն յաջորդեցին Դոկտ՝ Անի Եագճեան, Դոկտ. Յարութիւն Ալեքսանեան, Արթ. Տ. Կտրիճ քհն. Տէվէճեան եւ Դոկտ.

Միհրան Աղպապեան: Թէ առաւօտեան եւ թէ կէսօրէ ետքի զեկոյցներու աւարտէն ետք տեղի ունեցան հարց-պատասխանի աշխույժ փոխանակութիւններ հայկական մեծագոյն բարեսիրական հաստատութեան գործունէութեան եւ նոր սերունդը դիմակալող յառաջիկայի մարտահրաւէրներու շուրջ:

Իր տեսակին մէջ բացառիկ գիտաժողով մըն էր, որուն համար կը շնորհաւորենք կազմակերպիչները:

# ՅԻՇԱՍԱԿԵԼԻ ՕՐ ՄԸ – «ԼԱՐՔԻ ՕՐ»Ը

Շարունակում է 8-էն

ասպարէզ կայ: Իրենք դասական, յատկապէս սրբազան երգեցողութեան մեր դեսպաններն են:

Իսկ ինչպէ՞ս նկարագրել Մոցարթի "Requiem"ը: Հրաշալի ամբողջութիւն մը կազմեցին տիրիժօր-սոլիստ, նուագախումբ եւ երգչախումբ միաւորները, որոնք ներդաշնակ կերպով շողկապուած էին իրարու: Իւրաքանչիւրը, սկսելով Մաէսթրօն, որուն մասին, ինչպէս սօլիստներու, արդէն գնահատանքով արտայայտուեցանք, հասնելու նուագախումբին եւ երգչախումբին, իրենց ձայնային եւ գործիքային ներդրումներով, մեզի տուին հրաշալի "Requiem"ը, իր ամբողջական կառուցով: Մոցարթ վստահաբար գոհ պիտի ըլլար իր գլուխգործոցի այդ օրուայ ներկայացումէն: Մեր ականջներուն եւ հոգիներուն մէջ երկար ատեն պիտի մնան "Requiem"ի տարբեր-տարբեր բաժինները, մեղմ եւ մեղեդիաւոր մուտքէն՝ "Entrance", մինչեւ հզոր "Kyrie"ները, "Dies Irae"ները, «սօլօ» բաժինները, "Chorus"ները, "Hostias"ը, մանա-լանդ "Sanctuse"ը, "Pie Jesu"ն, "Angus Dei"ը եւ վերջապէս "Lux Aeterna"ը, յաւերժական լոյսը: Այս բոլորը կատարուեցան անթերի երգեցողութեամբ, եւ պահանջուած շեշտաւորումներով, իւրաքանչիւրին լսողութեան եւ հոգիներուն մէջ փոխնիփոխ փոթորիկ եւ խաղաղութիւն ստեղծելով: Մոցարթի սրտառուչ եւ խստապահանջ այս գործը, այդ գիշեր, մեզի հրամցուեցաւ իր հիացում պատ-


ճառող, եւ անթերի կատարող արուեստով: Երկար եւ յորնկայս ծափահարութիւններով դիմաւորուեցաւ "Requiem"ը:

Ուրեմն յայտարարի այս երեք բաժինները — Սիմոնեան, Պապա-ճանեան եւ Մոցարթ — արդէն արձանագրուած էին եւ կատարուեցան: Յայտարարէն դուրս խիստ հաճելի անակնկալ մը պահուած էր, որ դարձեալ մեր հոգիները լեցուց հարտութեամբ: Մաէսթրօ Պարտումեան յայտարարեց որ մեզի պիտի ներկայացնէ Եղիշէ Չարենցի «Ես իմ անոյշ Հայաստանի» ծանօթ բանաստեղծութեան հայրենի երգահան Տիգրան Մանսուրեանի երաժշտական ձեւաւորումը, որ պիտի առաջարկուէր իբրեւ անկախ Հայաստանի պետական նոր օրհներգը: Հրաշալի երաժշտական յօրինում մըն էր վայել թէ Չարենցի, եւ թէ Մանսուրեանի, որ, վերջին վայրկեանին կ'իմանանք թէ չէ ընդունուած: Փոքրիկ մանրամասնութիւն մը. սրահէն ներս կը գտնուէր երգահան Մանսուրեանի դուստրը, որ, վստահաբար, իր հօր փոխարէն, ունեցաւ մեծ բաւարարութիւն, ի տես հրաշալի կատարումին, եւ ներկաներու խանդավառ եւ երկարատեւ ծափահարութեան:

«Վարձքը կատար» «Լարք»ի մեծ ընտանիքի անդամներուն, նուիրատուներուն, նուագախումբի եւ երգչախումբի անդամներուն, սօլիստներուն, կազմակերպիչ յանձնախումբին, եւ ի վերջոյ, Մաէսթրօ Վաչէ Պարտումեանին, մեզի շնորհուած այս մեծ վայելքին համար:

United States Postal Service Statement of Ownership, Management, and Circulation		
1. Publication Title Massis Weekly	2. Publication Number 0 6 6 7 - 3 1 0	3. Filing Date Oct 28, 2006
4. Issue Frequency Weekly, except 2 weeks in August	5. Number of Issues Published Annually 50	6. Annual Subscription Price \$ 50.00
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4) 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104		Contact Person Telephone 626-797-7681
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer) 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104		
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)		
Publisher (Name and complete mailing address) SDHP - 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104		
Editor (Name and complete mailing address) Dr. Arshag Kazanjian - 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104		
Managing Editor (Name and complete mailing address) Vabe Atchabahian - 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104		
10. Owner (Do not leave blank. If the publication is owned by a corporation, give the name and address of the corporation immediately followed by the names and addresses of all stockholders owning or holding 1 percent or more of the total amount of stock. If not owned by a corporation, give the names and addresses of the individual owners. If owned by a partnership or other unincorporated firm, give its name and address as well as those of each individual owner. If the publication is published by a nonprofit organization, give its name and address.)		
Full Name SDHP	Complete Mailing Address 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104	
13. Publication Title Massis Weekly	14. Issue Date for Circulation Data Below Oct. 30, 2006	
15. Extent and Nature of Circulation		
Average No. Copies Each Issue During Preceding 12 Months		No. Copies of Single Issue Published Nearest to Filing Date
a. Total Number of Copies (Net press run)		
		3500
b. Paid and/or Requested Circulation		
(1) Paid/Requested Outside-County Mail Subscriptions Stated on Form 3541 (Include advertiser's proof and exchange copies)	123	123
(2) Paid In-County Subscriptions Stated on Form 3541 (Include advertiser's proof and exchange copies)	380	380
(3) Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Non-USPS Paid Distribution	2400	2400
(4) Other Classes Mailed Through the USPS	66	66
c. Total Paid and/or Requested Circulation (Sum of 15b.(1), (2), (3), and (4))		2969
d. Free Distribution by Mail (Samples, complimentary, and other free)		
(1) Outside-County as Stated on Form 3541	40	40
(2) In-County as Stated on Form 3541	35	35
(3) Other Classes Mailed Through the USPS		
e. Free Distribution Outside the Mail (Carriers or other means)		300
f. Total Free Distribution (Sum of 15d. and 15e.)		375
g. Total Distribution (Sum of 15c. and 15f.)		3344
h. Copies not Distributed		156
i. Total (Sum of 15g. and 15h.)		3500
j. Percent Paid and/or Requested Circulation (15c. divided by 15g. times 100)		
		88.7%
16. Publication of Statement of Ownership <input type="checkbox"/> Publication required. Will be printed in the Nov. 4, 2006 issue of this publication. <input type="checkbox"/> Publication not required.		
17. Signature and Title of Editor, Publisher, Business Manager, or Owner		Date Oct. 30, 2006

# Հայաստան Համահայկական Հիմնադրամ 9-րդ Միջազգային Թելեթոն



# Armenia

Գոհաբանություն Օր

Նոյեմբեր 23, 2006  
KSCI-LA18 8am-8pm pst

Տեղեկության համար հեռաձայնել 1 800 888 8897

Կայքէջ [www.armeniasfund.org](http://www.armeniasfund.org)

**ArmeniaFund** 